

# ԼՈՅՍ

ՕԾՅ՝ ԻձձՁ՝ ԸԿՄ  
 »Օ  
 ՌՅ՝ ԷՅ՝ ՌՅ՝ ԻՅ՝ ԻՅ՝ Կ  
 »ՌՅ՝ ՄՅ՝ ԱՅ՝ ԱՅ՝ՌՁ

Ձ՝ ՌՅ՝ ԸՅ՝ ԻՅ՝ ՌՅ՝ »Օ՝ · ԸԸՅ՝ ձձՌՅ՝  
 ԸՅ՝ ՄՅ՝ · ԸՅ՝

3/4 · ԸՅ՝ ԸՅ՝ ԸՅ՝ ՌՅ՝ Կ

ՕձձՅ՝ ՅՅ՝ ՌՅ՝ ՌՅ՝ ՄՅ՝ ՌՅ՝  
 1 5 1 7 5 - 1 1 7  
 ԱՅ՝ՌՅ՝ Կ - ԱՅ՝ Կ

ՁձձՅ՝ ԸՅ՝ 6 4 9 5 1 8 0  
 ՄՅ՝ ՄՅ՝ 6 4 9 5 2 0 8

E-mail : louys@dpir.com

Համար 7  
 30 Յուլիսի , 2000թ.

Գիրը՝ 3000 ռիպլ

# LOUYS

Armenian Cultural  
 and Social Biweekly  
 No. 7 , 30 June, 2000

License Holder and  
 Editor-in-Chief  
 Ed. Baghdasarian

POBox 15175-117  
 Tehran - Iran  
 Tel. (0098 - 21) 6495180  
 Fax . (0098 - 21) 6495208

## ՝ աի՝ ԿՅ՝ ԻձձՁ՝ ԸՅ՝

- Գաբրիել Սունդուկեան.....2-3
- Լուրեր.....4-6
- Թեմական.....7-8
- Հասարակական.....9-11
- Հայաստանի Խորհրդարանը .....12
- Առողջապահական .....13
- Մշակոյթ - Գրական էջ .....14
- Մշակոյթ – Հայաստանի գեղանկարիչներ.....15-16
- Կրթական.....17
- Սարգական .....18-19
- Ժամանց .....20-21
- Երիտասարդի համար.....22

## ä՝ ռեձ՝ »ՌՅ՝ ՄՅ՝ ԱՅ՝

Աւետիք Տիգրանակերտցի 1  
 Ամփոփ լուրեր 2-7  
 Զրոյց Էդ. Հախսերդեանի  
 հետ 8  
 Դերենիկ Դեմիրճեանի  
 մանրապատումներ 9-10

فهرست بخش فارسي  
 آوتيك تيگرانانگرددسي  
 ۱  
 مرور اخبار  
 ۲-۷  
 گفتگو با ادوارد حق ورديان  
 ۸  
 ادبيات - داستانهاي کوتاه  
 از  
 درنيك دميرچيان  
 ۹-۱۰

## Շապիկի առաջին էջում՝

Գաբրիել Սունդուկեան  
 ծննդեան 175-ամեակի

طرح روي جلد:  
 گابریل سوندوکیان  
 درام نویس نامي ارمني

## ՁձձՅ՝ ՄՅ՝ ՌՅ՝ ՄՅ՝Ռձ՝ ԲԸ՝ Յ՝ ԻձձՁ՝ՌՁ

Թամար Փանոսեան, Աննա Սարգսեան,  
 Ռուբիկ Սարգարեան, Լևոն Ահարոնեան,  
 Անդրանիկ Խեչումեան, Կարո Սարգսեան,  
 Ռոբերտ Վարդումեան, Վաչիկ Վարդանեան,  
 Ռազմիկ Վելիջանեան, Անդրանիկ Զաքարեան,  
 Սուսաննա Համբարձումեան , Այդա Ազարեան,  
 Ժորժ Ահարոնեան, Ռոյ Ղազարեան, Անուշ Մելիքեան,  
 Անի Նազարեանց, Րաֆֆի Ուրուջեան, Թեմի Իսաղուլեան,  
 Կ. Տ. Յովհաննիսեան, Ռ. Կորիւն, Կարոլին Աբրահամեան

# ՄԵԾԵՐԸ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՎ ԵՆ ԱՆՄԱՀԱՆՈՒՄ

## Գաբրիել Սունդուկեան 175

### Վաչիկ Վարդանեան

Նման անմահների շարքին է դասուում հայ մեծանուն դրամատուրգ Գաբրիել Սունդուկեանը: Նա իր նախորդներից տարբերուում էր զուտ այն պատճառով, որ նրա ստեղծագործությունների հերոսները ոչ հարուստ վերնախաւից էին եւ ոչ էլ պետական այրերից, այլ նրանք ընդամենը սովորական «մահկանացուներ» էին՝ ժողովրդի միջից ելած, ազնիւ հոգու տէր մարդիկ: Անհատի արտաքինը կամ հասարակական դիրքը չէր հետաքրքրուում մեծ հեղինակին, այլ նրա մարդկային վեհ զգացումները, սպաւումները եւ վերաբերմունքը:



Սունդուկեանի այս քաջարի քայլը (այն ժամանակներում դա իրօք քաջութիւն էր համարուում) ոմանց դուր չէր գալիս: Նրանք՝ բշմամանքով լցւած, դիմեցին տարբեր միջոցների, որպէսզի չրեմադրուի Սունդուկեանի թատերգությունները, անգամ նրա հասցէին սկսեցին ստոր մեղադրանքներ բարդել: Սակայն շնորհիւ գրականութեան եւ արւեստի սիրահար ազնիւ մարդկանց այդ շարամիտները չհասան իրենց ստոր նպատակին, եւ 1871 թականին բեմադրուեց հեղինակի գլուխ գործոց՝ «Պեպո»-ն: Պեպոյի առաջին ներկայացումը այնքան մեծ ազդեցութիւն բողեց,

որ ներկայացման ատարտից յետոյ թատրոնի շքանուոք ներխուժեց հասարակ մարդկանց մի հոծ բազմութիւն՝ խարդախ վաճառական Արուիին Ջիմզիմովի բռնելու եւ ծեծելու մտադրութեամբ: Ջիմզիմովի դերակատարը հազիւ հասցնում է շտապ հեռանալ շէնքի ետնամուտքից:

Սունդուկեանը բեմական մեծ փորձ ուներ, բայց չնայած դրան, այնուամենայնիւ ստեղծագործելիս հրաւիրում էր թատրոնի ժամանակակից, բանիմաց դերասաններին եւ նրանցից խորհուրդ հարցնում: Իսկ գործի ատարտից յետոյ նա հրապարակաւ հանդէս գալով, իր երախտագիտութիւնն էր յայտնում այդ մարդկանց: Նա իր նամակներից մէկում հանրայայտ դերասան՝ Գեորգ Չմշկեանին այսպէս է գրում, «Քանի՛ եւ քանի անգամ գործդ թողած, ամառային շոգ պապանքին, ոտով եկել ես կրծանիս եւ գնացել, օգուտներ եմ քաղել քո խորհուրդներից... Այժմ թոյլ տուր ինձ, սիրելի Գեորգ, խնդրել քեզ՝ ընդունելու եւ այս նազ ներս իբրեւ յիշատակ քո չափազանց աշխատութեան եւ հարկ՝ քո անսահման սիրոյն դէպի մեր թատրոնը»:

Գ. Սունդուկեանը վերին աստիճանի համեստ եւ համբերատար էր: Իր անձի նկատմամբ հասցւած վիրատրանքների հանդէպ շատ համբերատար վերաբերմունք էր ցուցաբերում, սակայն երբ դրանք արւում էին մի շարք ազնիւ եւ նւիրեալ մարդկանց հասցէին, նա իր բողոքի ձայնն էր բարձրացնում յանուն արդարութեան:

Միա թէ ինչ է գրում նա իր նամակներից մէկում «Մշակ» թերթի խմբագրին.- «Դուք (Արծրունի) մէկ անգամ անուանել էք ինձ ձեր միակ բարեկամ: Այն թուպից սկսած ես միշտ աշխատել եմ արժանի գտնել Ձեր բարեկամութեանը, եւ հէնց այս պատճառով շատ անգամ համբերութեամբ տարել եմ Ձեր զանազան անտեղի վարմունքը դէպի ինձ... Քանի որ Դուք վիրատրել էք մեր թատրոնի լաւոյն գործիչներին եւ Դուք թոյլ էք տալիս Ձեզ պախարակել հին գործիչներին... Հարց է ծագում, թէ Դուք ինչ իրաւունքով էք ասում այս խօսքերը»:

Սունդուկեանը չէր սիրում կեղծ- ցուցադրական վարքեր դրսետրող մարդկանց: Նա փառամուլութիւնը համարում էր անհոգի մարդկանց գաղափար:

Նա իր թողած կտակում այսպէս է գրում.- «Իմ թաղումի առաջ՝ տունը վունչիչ պանիխդէք չլլի. մեռնակ իմ տանու քահանէն հերիք է, վուր էկողներու համա մէ «Հայր մեր» ասէ, վունցոր վաղ կարիք է... Մոռացայ իր տիղն ասիմ, վուր զագեթնիրը չլքցնիք անթիւ ու անճոռնի յայտարարութիւններով ու անտեղի խօսկերով... Պեպոյի արձանը շատ հիշու բան է. էստու համա օշով չնիղանաք հիմի ու անմիղ ժամանակ չկորցնիք»:

Ինչպէս արդէն պարզում է մեծ գրող արւեստագէտի փափագն էր «Պեպո»-ի արձանի կառուցման գաղափարը գործնականի վերածելը: Նրա իղձը անկատար չննաց, յետագայում հայ ժողովրդի ձեռքով այն կառուցուեց Երւեստում՝ Սունդուկեանի անուան թատրոնի շէնքի առջեւ:

Սունդուկեանը ուներ բազմաթիւ գրածքներ՝ թատերգութիւններ, արձակ եւ թարգմանութիւններ: Նրա յայտնի գրածքներից են՝ «Գիշերայ սաբրը խէր է», «Խաթա-

բալա», «Էլի մէկ գոհ», «Համայն մաս- լահաթները» եւ ... Մակայն ինչպէս նըշ- ւեց «Պեպօ»-ն հա- մարում է հեղինակի գլուխգործոցը:

Հեղինակը իր այս գործում նախ շօշա- փում է այդ ժամա- նակներում ընտա- նիքների մէջ գոյու- թիւն ունեցող անար- դար եւ անմարդկա- յին սովորութիւնները եւ փոխադարձ պայ- մանները: Այնուհե- տեւ նկարագրում է հարուստ խարդախ մարդու՝ Չիմզիմովի կերպարը, այդ մար- դու մէջ տեսնելով հրէշի կերպար: Իսկ վերջինիս հակա-



Պեպօ-ի արձանը

պատկերն է թատերգութեան հերոս՝ Պեպօն, հասարակ ձկնորս, ազնիւ մարդ, որն իրեն գոհաբերեց՝ իր ընտանեկան պատիւը փրկելու համար: Վաճառական Չիմզիմովը ուրանում է Պեպոյի հօր հետ ունեցած իր փոխանակագիրը (բարաթ), երբ լսում է այն կորել է:

Իսկ Պեպօն ըստ պայմանաւորաւորութեան, Չիմ- զիմովից ստացելիք գումարը պիտի յանձնէր քրոջ փե- սացուին՝ որպէս օժիտ:

Ի՞նչ պիտի անէր «խեղճ» Պեպօն:

Մակայն բախտի բերումով գտնում է «բարաթը»:

Այս մասին իմանալով Չիմզիմովը փորձում է իր «պատիւը» փրկելու համար, Պեպոյի հետ գաղտնի հա- մաձայնութեան գալ, սակայն Պեպօն նախընտրում է բանտարկեալի ճակատագիրը ասելով.- «...Մէկն էլ է չի՞մաց անէ աշխրջին սրա (Չիմզիմովի) արարումը, մէկն էլ է հարայի չկանենայ տա՞յ, վուր էս մարթը, վուրին դիփուները գլուխ ին տայի, դիփուները յարգում ին ու պատում ին, դիփուները միճճացնում, փառաւորում ու երգինք բարցրացնում... սա էն մարթն է, վուրի համա վուչինչ բան սուրփ չկայ աշխրջումը...»:

Այսպիսով Պեպօն մերժեց խարդախ վաճառականի առաջարկը:

Նոյնիսկ ծանօթանալով միայն Պեպոյի կերպարին, մենք արդէն կարող ենք հետեւութիւն անել Սունդուկեանի ներաշխարհի եւ վսեմութեան, նրա բարութեան եւ մե- ծութեան մասին:

Այսօր հայ ժողովուրդը եւ մասնաւորապէս արեւստա- սեր հասարակութիւնը տօնում է Սունդուկեանի ծննդեան 175 -ամեակը եւ դեռ դարեր կը տօնի, քանզի նա առ յա- լեւ կապի մեր սրտերում: ■

## Սունդուկեանի նամակներից «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ

Ձեր լրագրի 19-րդ համարում դուք նւիրել էիք իմ « Էլի մէկ գոհ » կոմեդիային մի անաչառ և օրինակելի քննա- դատութիւն, որի մասին ես յայտնում եմ ձեզ իմ խորին շնորհակալութիւնը:

Դուք, պարոն խմբագիր, գրել էիք ձեր յօդաւորը այն տպաւորութեան տակ, որն իսկապէս կարող էիք դուրս բերել նոյն կոմեդիայի ներկայացումից անցեալ յունւարի 26-ին: Բայց խնդիրը նորանումն է, որ իմ պիեսայի մէջ Անանին չէ մեռնում եւ չէր էլ կարող մեռնել նոյն բոլակին, որքան էլ կամենայի ես. այլ միմիայն ուշաքափում է նա հոգեկան սաստիկ յուզումներից և շրջապատող անճանց բռնադատական ճնշումներից:

Այս իրողութիւնը ապացուցանելու համար ուղարկում եմ ձեզ ճիշտ պատճէնը այն օրինակի, որը նախքան ներկայացումն՝ առաջարկւած է ցենզուրային կոմիտե- տին, ուր նա այժմս գտնում է և պէտք է գտնուի միշտ:

Ձեզ, պարոն խմբագիր, առաւել լաւ, քան թէ մի ուրիշին, յայտնի է, որ առհասարակ իմ պիեսաներիս մէջ անբնական դիպաւծներ չեն պատահում իմ հերոսների հետ, այլ խրաքանչիւր մի փաստ հետևանք է լինում մի որևէ յայտնի պատճառի:

Մի կողմը բողմելով այն հանգամանքը, որով «Էլի մէկ գոհ» կոմեդիայի վերջը կատարեցաւ ներկայացման օրը այնպէս, ինչպէս մենք ամենքս ականատես եղանք, թէւ գլխաւորապէս իմ սխալմունքով, հաւատացնում եմ ձեզ, որ Անանու անբնական մահից ես արելի եմ վշտացած, քան թէ մի ուրիշը կարող էր վշտանալ նորա իսկական մահուամբ:

Եթէ դուք, պարոն խմբագիր, կը բարեհաճէիք ձեր լրա- գրի էջերում նւիրել մի քառորդական մասը նոյն տեղի, որքան շնորհել էիք « Էլի մէկ գոհի » քննադատութեանը, ես խոնարհաբար կը խնդրէի ձեզ տպել այս նամակիս հետ պիեսայի գօնէ վերջին տեսիլի բովանդակութեան իմաստը մի փոքրիկ ծանօթութեամբ, վերստին պիեսան ինձ դարձնելով, որով և կը պարտաւորէիք ինձ:

Գ. Սունդուկեանց

1881 - 9 փետրւարի Թիֆլիս

خدمات ساختمانی خانیان

ԽԱՆԵԱՆ

انجام کلیه کارهای لوله کشی گرم


و سرد شوفاژ و تعمیرات

نصب و سرویس بهداشتی - نقاشی

تلفن: ۸۴۱۶۳۹۱

ԷճՅ ԿՅ ՆՅ ՍԾՅ ՍՅ ՍՅՆ

Սրբազան Հայրը՝ ընդունեց «Լոյս»-ի խմբագրական կազմի անդամներին.- Սոյն թականի յունիսի 10-ին «Լոյս» երկշաբաթաթերթի խմբագրական կազմը հանդիպում ունեցաւ Թեհրանի Հայոց Թեմի նորընտիր Առաջնորդ՝ Տէր Սեպուհ Եպիսկոպոս Մարգսեանի հետ: Նախ գերաշնորհ Սրբազան Հայրը խօսեց մամուլի առաքելութեան եւ նրա ազդեցութեան մասին, որ մամուլը կարող է ունենալ համայնքում եւ նոր սերունդի դաստիարակութեան վրայ: Նա նշեց, որ ինքը կողմ է թափանցիկութեանը եւ դա անհրաժեշտ է մեր համայնքին: Ըստ նրա, հոգևորական դաստիարակութիւնը թոյլ է եղել մեր համայնքում եւ արդէն ինքն այդ ուղղութեամբ ծրագրներ ունի: Ըստ Առաջնորդի արտագաղթի դէմ պայքարելը բոլորիս առաջնակարգ պարտականութիւնն է, բոլորս միասնա-



բար պէտք է մեր հնարատրութիւնների սահմաններում աշխատենք այդ ուղղութեամբ, եւ մեր սերունդը պէտք է դաստիարակւի որպէս Հայ Մարդ, որը իր գործունէութեան սկզբունքը եւ չափանիշը կլինի ազգային շահերը վեր դասելու գաղափարը: Հայ մարդը իրատուօր չունի միայն անհատական շահերի մասին մտածելու:

«Լոյս»-ի գլխատըր խմբագիր եւ արտօնատըրը համառօտ կերպով ներկայացրեց մեր համայնքի մամուլի պատմութիւնը, անդրադարձաւ «Լոյս» երկշաբաթաթերթի որդեգրած նպատակներին ու ուղղութեանը: Այնուհետեւ տարբեր հարցերի շուրջ մտքերի փոխանակում եղաւ: Մասնանշուեց, որ պէտք է սերտ կապեր գոյութիւն ունենայ մամուլի եւ հոգեւոր խառնի եւ յատկապէս Սրբազան հօր միջեւ: Մամուլը պէտք է կարողանայ բոլոր վսեմ գաղափարները եւ մօտեցումները, որոնցով մեր հոգեւոր


խառն առաջնորդում է, ժողովրդի սեփականութիւնը դարձնի: Իհարկէ այդ գործում իր նպաստը պէտք է բերեն նաեւ մեր համայնքի միւս պատասխանատուները, միութիւնները, դպրոցները եւ...: Պէտք է աւելի շատ բարձրանայ ազգային գիտակցութեան վսեմ գաղափարը: Ներկայ պայմաններում երկխօսութիւնը մեր ազգային ու հասարակական հարցերի շուրջ կը նպաստի ազգային դաստիարակութեան ու ազգային համոզմունքների ստեղծմանն ու զարգացմանը:

Միութիւններում սկսեցին ամառային աշխատանքները.- Արդէն երկար տարիներ է, որ Իրանում բոլոր հայկական միութիւնները երեխաների համար նախաձեռնում են ամառային աշխատանքներ: Այն իր մէջ ընդգրկում է մարզական, մշակութային եւ գեղարեստական աշխատանքներ:

Թեմական Խորհրդի եւ ԻԱՍՄ-ի երկրորդ հանդիպումը.- Սոյն թականի յունիսի 5-ին, Թեհրանի Թեմական Խորհրդի հրատըրով տեղի ունեցաւ նոյն խորհրդի եւ ԻԱՍՄ-ի վարչութեան եւ որոշ ղեկավար անձերի երկրորդ հանդիպումը:

ԷճՅ ԿՅ

Ի.Ն.Գ նախարարութեան քաղաքական բաժնի վարիչ՝ Թաջգաղէն համալսարանների քաղաքականացման անհրաժեշտութեան մասին (Բայան օրաթերթ 6.6.2000).- Պրն. Թաջգաղէն իր խօսքերում արտայայտեց հետեւեալ մտքերը.-Արժեքների ու դեմոկրատիայի համատեղումը Իրանում, շատ լուրջ է ընդունում արեւմուտքի կողմից: Արեւմուտքի մտաւորականները այն հարցն են արծարծում, թէ Իրանի նման մի երկրում, որի հարեւաններն են Իրաքը եւ ԱՖղանստանը, ինչպէս է կարելի այնտեղ ժողովրդավար դեմոկրատիա ձեւառնել: Իսկ համալսարանների քաղաքականացման անհրա-



ժեշտութեան մասին նա նշում է.- Սեր համալսարանները պէտք է տարբեր հարցեր վերլուծեն եւ համապատասխան լուծումներ գտնեն, եթէ ոչ, ուրիշները կը գան եւ հարցերին կը պատասխանեն այնպէս, ինչպէս իրենց դա ձեռք կը տայ: Մենք պէտք է մեր տնտեսական ու գործնական վերաբերմունքով ապացուցենք, որ տարածայնութիւնը չի նշանակում թուլացում: Հակադիր ճաշակներ ունենալով հանդերձ, պէտք է միմեանց կողքին լինել:

Ի.Ի.Հ. Նախագահ Խա-թանի,- Իրանը իր տնտեսական համագործակցութեան մէջ արտասահմանեան երկրների հետ, առաջնահերթութիւնը տալիս է հարեւան երկրներին (Բայան օրաթերթ 12.6.2000).- Վերոյիշեալ որոշման գաղափարը նա յայտնել է Ուզբեկստանի նախագահ Իսլամ Զարիմովի հետ հանդիպման ժամանակ: Հանդիպման ընթացքում նա նաեւ ասել է, որ Իրանի եւ Միջին Ասիայի երկրների միասնականութիւնը եւ համագործակցութիւնը օտարների ներկայութեան նազեցման պատճառ կը դառնայ:



Իրանը կը հիւրընկալի ճատրակի (տղամարդկանց) միջազգային փուլի մրցակիցներին (Բայան օրաթերթ 8.6.2000).- Լոնդոնի «Յայնան-շալ Թայմզ» թերթը տեղեկացնում է, որ ըստ Իրանի եւ շախմատի միջազգային Ֆեդերացիայի համաձայնութեան, աշխարհի տղամարդկանց շախմատի 2000 թականի վերջնական փուլի մրցութիւնները տեղի են ունենալու Թեհրանում:

Թուրքիայի 110 ընկերութիւնների ներկայացուցիչներ այցելեցին Իրան (Բայան օրաթերթ 29.5.2000).- Առեւտրական համագործակցութեան եւ համատեղ կապիտալի ներդրման նպատակով, Թուրքիայի 110 ընկերութիւնների ներկայացուցիչներ այցելեցին Իրան: Թուրքիան 1999 թականին 124.5 միլիոն դոլարի արժողութեամբ ապրանք է ընդունել Իրանից եւ 162.4 միլիոն դոլարի արժողութեամբ ապրանք փոխադրել Իրան:

**Քաղաքական ուժերը Իրանի խորհրդարանում (Բայան օրաթերք 10.6.2000).**- Ըստ Բայան օրաթերքի, Իրանի 6-րդ շրջանի նորընտիր խորհրդարանում, քաղաքական ուժերի յարաբերությունները հետևեալն են՝ 1. Մոշարեքաթ ճակատ՝ 77 պատգամատուր: 2. Մաջմա Ռոհանին Մոբարեզ՝ 67 պատգամատուր: 3. Աջ թե՛ 60 պատգամատուր: 4. Քար (բանուրական արհմիութիւնների պատգամատուրներ)՝ 20 պատգամատուր: 5. Անկողմնակալներ՝ 20 պատգամատուր (7.7 տոկոս): 6. Քարգզարան՝ 15 պատգամատուրներ: Ընդհանուր պատգամատուրների թիւը 257 է:

**Համաշխարհային բանկը օգնում է Թեհրանի կանաչիզացմանը (Իրան օրաթերք 11.6.2000).**- Համաշխարհային բանկը 145 միլիոն դոլար վարկ է տրամադրելու Իրանին Թեհրան եւ Ռէյ քաղաքների կանաչիզացման համար:

**Իրանի նախագահ պրն. Խաթամին մասնակցեց ՀաՖեզ Ասադի թաղման արարողութեանը (Բայան օրաթերք 13.6.2000).**- Պրն.




Խաթամին, սոյն թականի յունիսի 11-ին մասնակցեց Սիրիայի նախագահ՝ ՀաՖեզ Ասադի թաղման արարողութեանը: Այնտեղ ներկայ էին տարբեր երկրների բարձրաստիճան պատիւիրակութիւններ: Հայաստանից ժամանել էր ՀՀ նախագահ՝ պրն. Ռոբերտ Քոչարեանը:

**Իրանում սովորում են արտասահմանցի ուսանողներ, աւելի քան 50 երկրներից (Համշահրի օրաթերք 10.6.2000).**- Իրանի գիտահետազօտական բաժնի վարիչ՝ պրն. Մոսթաֆա Մոհինը Կիրկիզիստանի հանրապետութեան գիտութեան ու մշակոյթի նախագահ՝ Բէզ Բալաթէֆի հետ հանդիպման ժամանակ, յայտնել է վերոյիշեալ տեղեկութիւնը:

ԾՅ ՄՅ Է՞՞ Ե՞՞

**ՀՀ մշակոյթի նախարար՝ Ռոյալանդ Շառոյեանը հեռացեց ՀՅԴ-ից (Ազգ. հեռու՝ 10.6.2000).**- Երկիր օրաթերքի սոյն թականի յունիսի 11-ի համարում տրպագրել է, ՀՀ-ի գերագոյն մարմնի անդամ Արմէն Ռուստամեանի յղածը, որում պարզաբանում է թէ ինչո՞ւ Ռոյալանդ Շառոյեանը հեռացեց ՀՅԴ-ից:



**Հայաստանում Քրիստոնէութեան 1700 ամեակի տօնակատարութեան յանձնախմբի քարտուղարը փոխեց (Աշխարհ օրաթերք 15.4.2000).**- Նկատի առնելով Քրիստոնէութեան 1700 ամեակի տօնակատարութեան եկեղեցական յանձնաժողովի գործադիր վարիչ-քարտուղար Մեսրոպ Արք. Աշնեանի հիւանդութեան պատճառով հրաժարականի դիմումը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սոյն թականի մարտի 30-ի հայրապետական տուած որոշումով, Սրբազան Հայրը ազատել է իր գրադեցրած պաշտօնից: Հայրապետական որոշումով սոյն թականի ապրիլի 1-ից Ս.Մեսրոպ Արք. Աշնեանին փոխարինելու է Կանաղայի Թեմի Առաջնորդ՝ Տ.Յովնան Արք. Տէրտէրեանը:

**Ամերիկայի գերակտի քաղաքականութիւնը Անրոդկովկասում խիստ մտահոգիչ է (Ազգ. հեռու. 17.5.2000).**- Աղբրեջանի եւ Վրաստանի բարձրաստիճան պաշտօնեաների անընդհատ կրկնող յայտարարութիւնները՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու ցանկութիւնների մասին, Հայաստան այցելող ԱՄՆ տարբեր մակարդակներով պատիւիրակութիւնների բանակցութիւնները նախագահ Քոչարեանի հետ, եւ Հայաստան-ԱՄՆ երկկողմ յարաբերութիւնների խորացումը խիստ մտահոգում են Ռուսաստանի բարձր պաշտօնեաներին:

ՆԱՏՕ-ի առանցքային խնդիրն է, թոյլ չտալ Ռուսաստանի ազդեցութեան տարածումը դէպի Հայաստան, Իրան, Մերձատր Արեւելք եւ Տաջիկստան:

**Միասնութիւնը պէտք է պահպանել (Նորաթերք 17.5.2000).**- ՀՀ ԱԺ փոխնախագահ, ՀԺԿ-ի անդամ՝ Գագիկ Ասլանեանը «Նորաթերք»-ում տուած մի հարցազրոյցում արտայայտելով վերոյիշեալ գաղափարը, և այսպէս է շարունակել,- Յատով են արձանագրում դաշինքից երկրապահների դուրս գալը: Բոլոր դէպքերում չեն կարծում, թէ դա կը հանգեցնի որոշակի հակասութիւնների: Գուցէ եւ նպաստի, որպէսզի իրենց ինքնուրոյն քաղաքական դէմքը ներկայացնեն հանրութեանը, այլ ոչ թէ միջնորդաւորուած, այս կամ այն կուսակցութեան միջոցով: Սկզբունքային հարցը դաշինքի պահպանման հարցն է եւ այն առաքելութիւնը, որն ստանձնել է «Միասնութիւնը»:

**Հոկտեմբեր 27-ի դէպքերին կապուած քննարկումների մասնակի ասարտը (Ազգ. հեռու. 17.5.2000).**-



Հոկտեմբերի 27-ին ԱԺ դահլիճում տեղի ունեցած ահաբեկչութեան դէպքերին կապուած քննարկումները, մասնակի արդիւնքի է հասել եւ շուտով պէտք է յանձնի դատարան:

**Ո՞ր կողմ գնալ. Ռուսաստան թէ Ամերիկա (Հայոց աշխարհ 17.5.2000).**- Լինելով Անրոդկովկասում, Ռուսաստանի յենման միակ ամուր կէտը՝ Հայաստանը գտնուում է վերջինիս մրցակիցների ու հակառակորդների քաղաքական ու տնտեսական ճնշման տակ: Ռ-Գ պաշտպանութեան նախարարութեան միջազգային ռազմական համագործակցութեան գլխատր վարչութեան պէտ, գեներալ Լեոնիդ Իւաշովը վերոյիշեալ տեսակէտը յայտնելով,

բացայայտ կերպով մատնանշում է այն ուժերին, որոնք փորձում են գայթակղել Հայաստանին եւ նրան շեղել հայ-ռուսական համագործակցութեան փորձարկած ուղիից: Միաժամանակ ակնյայտ է դառնում, որ Ռուսաստանի նոր ղեկավարութիւնը յստակեցրել է իր դիրքորոշումը այն երկրների հետ, որոնք ՆԱՏՕ-ի հետ համագործակցութեան են ձգտում, եւ այն, որ այս հարցում պարտաւոր չէ որեւէ զիջման գնալու:

**Ռորերտ Քոչարեանը կարեւորեց հայ-ամերիկեան ռազմական համագործակցութեան լայնածաւալումը (Աշխարհ օրաթերթ 15.5.2000).-**



Ռազմական ոլորտում հայ-ամերիկեան համագործակցութիւնը դեռեւս ցածր մակարդակի վրայ է, եւ այդ առումով անելիքները բուսականին շատ են, նշեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը ԱՄՆ-ի զինւած ուժերի բարձրաստիճան զինորականների պատիրակութեան հետ կայացած հանդիպման ժամանակ: Հայ-ամերիկեան յարաբերութիւնների ընդհանուր համաձայնագրում, նա կարեւորեց ռազմական բնագաւառում համագործակցութեան ծաւալումը:

**Արագածոտնի բնակիչները ստացան իրենց կենսաթոշակներն ու նպաստները (Նորաթերթ 17.5.2000).-** Արագածոտնի մարզպետարանի սոցիալական ծառայութեան վարչութիւնից հաղորդեցին, որ մարզում ստացել եւ բաժանել է 68 միլիոն դրամ, որը 8406 ընտանիքների փետրուար ամսւայ նպաստն է: Բացի այդ, 46 միլիոն դրամ ստացել եւ բաժանել է մարզի երեք քաղաքների եւ Ծաղկահովիտ գիւղի թոշակառուների: Սպասում է եւս 50 միլիոն դրամ, որը կը յատկացի գիւղի թոշակառու ազգաբնակչութեանը

**Շահագործման յանձնուեց մէկ ծրագիր ևս (Նորաթերթ 17.5.2000).-** «Հրագրան-6» ՍՊԸ շինարարական կազմակերպութեան կողմից Աշնակ գիւղում շահագործման յանձնուեց 5.6 կմ երկարութեամբ ոռոգման ջրագիծը: Այս ծրագիրը իրագործելու նպատակով ծախսել է 38 հազար դոլար:

**Աշխարհի հայ կանանց ընտրանին Երեսնամում (Ժամանակ 17.5.2000).-** Աշխարհի հայ կանանց ներկայացուցիչները, սոյն քականի հոկտեմբերի 8-11-ը համահայկական ժողով են անց կացնելու Երեսնամում: Նրանք քննարկելու են իրենց համար կենսական նշանակութիւն ունեցող հարցեր՝ մասնակցելով մասնագիտական սեմինարներին: Այս համաժողովը լաւ հնարաւորութիւն կը ստեղծի «Հայ կանանց հզօր միջազգային ցանց» ստեղծելու համար:

Համաժողովի կազմակերպիչ յանձնաժողովի համանախագահներն են՝ Էւոն Մեծորեանը՝ Բոստոնից, Հրանուշ Յակոբեանը՝ Երեսնից եւ Լիլի Ռիմզ Բալեանը՝ Լոս Անջելեսից: Համաժողովի համադրողն է Հերմինէ Չանոնեանը (Լոս Անջելես) իսկ ծրագրի գործադրման հսկող պատասխանատուն է Մեղա Քէշիշեանը (Բոստոն): Այս երեւոյթը խիստ կարևոր է այն առումով, որ ամբողջ երկրագնդից հայ կանայք կը հանդիպեն, մտքեր ու գաղափարներ փոխանակելու եւ հայրենիքի բարգաւաճման ապագայ ծրագրերի վերայ խորհելու նպատակով, - ասաց հայ կանանց միջազգային կազմակերպութեան նախագահ՝ դոկտ. Միլան Մարանեանը: Սա կը լինի հայ կանանց միջազգային կազմակերպութեան երրորդ համաժողովը: Առաջինը տեղի է ունեցել 1994 թականին Լոնդոնում, իսկ երկրորդը 1997-ին Փարիզում:

**ՅԷԷ<sup>2</sup> 1/4 1 2 ՄԱԷ**

**Չինաստան-ԱՄՆ-ը մտադրել է նոր սպառազինութեան մրցակցութիւն ստեղծել (Իրան օրաթերթ 7.6.2000).-** Չինաստանը զգուշացնում է, որ եթէ բախտստիկ հրթիռների արգելական պայմանագիրը ըստ Ամերիկայի պահանջի վերանայի, սպառազինութեան նոր մրցակց

ութիւն է սկըսելու: ԱՄՆ-ը մտադիր է խախտել 1972թ.-ի պայմանագիրը:

**ՄԱԿ-ի զեկոյցը աշխարհի կանանց մասին՝ «Կանայք որպէս զոհեր» խորագրի տակ (Իրան օրաթերթ 8.5.2000).-** ՄԱԿ-ի միջազգային հանրային բաժինը զեկուցում է, որ ներկայումս Աֆրիկայում «Էյդզ»-ի վիրուսով վարակւած կանանց թիւը գերազանցում է տղամարդկանց թիւն, աշխարհի անգրագետների 60 տոկոսը, իսկ աղքատների 70 տոկոսը կանայք են կազմում:

**Երոսյան կենսական նշանակութիւն ունի Ռուսաստանի համար (Իրան օրաթերթ 30.5.2000).-** Ռուսաստանի դաշնութեան նախագահ՝ Վլադիմիր Պուտինը Եւրոխորհրդի անդամների հետ իր առաջին հանդիպման ժամանակ յայտնել է վերոյիշեալ տեսակէտը: Նա աւելացրել է, որ Ռուսաստանը թէ աշխարհագրօրէն, թէ մշակութապէս եւ թէ իր տնտեսական կառոյցներով համարում է եւրոպական երկիր:

**ՏԿՐՈՒՆԻ**

Լոյս երկշաբաթաթերթը իր ցաւակցականներն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- Ռոբերտ Սերեբրակեան
- Շողեր Ալեանաքեան (Շահգոլղեան)
- Ալֆրէդ Մահմուդեան
- Երւանդ Մեհրաբեան
- Էմմիկ Խաչատրեան
- Նարդ Աղաջանեան
- Լովգա Մահմուդեան
- Էմիլ Թուլեան
- Սերոժ Գալստեան
- Խաչիկ Յարութիւնեան

Ï² ÛàÛ², ðàòÂÆòÛ¹Â °Ðð² ÛÆ Ð² Ûàò Â °ØÆ

**30ԴԻԱԾ 9**

Որեւէ մարմնի կամ ժողովի անդամ՝ իրենից հաշուառու ժողովում, չի կարող քւէի իրաւունքից օգտուել այն խնդիրների քւէառութեան ժամանակ, որոնք առնչուում են նոյն մարմնի հաշւառութեան:

**30ԴԻԱԾ 10**

ա- Ամէն ժողով կամ մարմին ունի իւր մնայուն դիւանը, բաղկացած ըստ անհրաժեշտութեան մէկ կամ երկու ատենապետներից եւ մէկ կամ երկու ատենադպիրներից:

բ- Նիւթական- տնտեսական գործունէութիւն ունեցող մարմինների դիւանի կազմի մէջ ներառուում է նաեւ մի գանձապահ, եւ ի պահանջել հարկի մի գոյքապահ:

գ- Դիւանի պարտականութիւնն է հսկել պատկան ժողովի կամ մարմնի աշխատանքների կառնուաւոր ընթացքի եւ տրամադրումների գործադրութեան վրայ:

**30ԴԻԱԾ 11**

ա- Բոլոր ժողովներն օրինական են, երբ նիստին ներկայ են տւեալ ժողովի անդամների պարզ մեծամասնութիւնը, այն է ընդհանուր թիւի կէսից մէկով ատէի ժողովականներ:

բ- Ժողովներում բոլոր որոշումները տրուում եւ ընտրութիւնները կատարուում են վճռական ձայնով, ժողովին մասնակցող անդամների պարզ մեծամասնութեան քւէով, բացի Առաջնորդ ընտրելու կամ հրաժարելու եւ ներկայ կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկելու խնդիրները՝ քննութեան առնելու եւ վճռահատելու պարագային, երբ անհրաժեշտ է պատկան ժողովի անդամների ընդհանուր թիւի ձայների երկու երրորդի մեծամասնութեան ապահովումը:

գ- Որեւէ ժողովականի առաջարկով կը կատարուի փակ քւէարկութիւն:

դ- Զւէարկութեան մասնակցելու իրաւունք ունեն միայն վճռական ձայնով ժողովի կամ մարմնի անդամ ընտրուած կամ նշանակուած այն ան-

դամները, որոնք ներկայ են ժողովի կամ մարմնի նիստին:

ե- Ժողովի հրաւերի մէջ պիտի յիշատակուի գումարման վայրը, թւականը, ժամը եւ օրակարգը:

**30ԴԻԱԾ 12**

ա- Օրակարգի հարցերը քննարկելուց յետոյ, առաջարկները, երկրորդելու պարագային, ենթարկուում են քւէարկութեան:

բ- Ժողովականների առաջարկով օրակարգի հարցերի հերթականութիւնը կարելի է փոփոխութեան ենթարկել, կամ օրակարգի նոր կէտ աւելացնել:

**30ԴԻԱԾ 13**

Եթէ որեւէ ժողովական ոչ յարգելի պատճառով երեք անգամ յաջորդաբար բացակայի պատկան ժողովի կամ մարմնի նիստից, այդ դէպքում ժողովի կամ մարմնի դիւանը պարտաւոր է ենթակային գրատր ազդարարութիւն անել եւ բացակայութեան համար բացատրութիւն պահանջել: Գոհացուցիչ բացատրութիւն չստանալու եւ կամ բացակայութիւնները ոչ յարգելի պատճառով շարունակելու պարագային, դիւանը հարցը կը յանձնի պատկան ժողովի կամ մարմնի ուշադրութեան ու ժողովի կամ մարմնի որոշումով ենթական հրաժարուած կը համարուի պատկան ժողովից կամ մարմնից ու նրան կը յաջորդի ժողովի կամ մարմնի անձնափոխանորդ անդամը, որը, եթէ պատկան ժողովի կամ մարմնի ընտրութիւններին հիմք են ծառայել թաղային կամ շրջանային բաժանումները, պիտի լինի նոյն թաղից կամ շրջանից որտեղից ընտրուել է հրաժարուած անդամը:

**30ԴԻԱԾ 14**

Իր գործունէութեան ժամանակաշրջանը լրացրած որեւէ ժողով կամ մարմին, պարտաւոր է իր աշխատանքները շարունակել մինչէ նոր ընտրութեանց աւարտումն ու գործերի փոխանցումն նորընտիր կազմերին:

**30ԴԻԱԾ 15**

Բոլոր գործադիր մարմինները, իրենց դրամական գործունէութեան մէջ, ղեկավարուում են պատկան իրաւաւոր ժողովների կողմից նախապէս վաւերացուած նախահաշիւներով կամ յատկացումներով:

**30ԴԻԱԾ 16**

Ազգապատկան ու շարժական գոյքերը, որոնք փչացել կամ ենթակայ են արժեքազրկման, կարելի է հաշիւելոյժ կատարել, կամ օրայ արժեքով վաճառել միայն պատկան մարմինների որոշումով եւ Թեմական Խորհրդի հաւանութեամբ:

**2. ԻՐԱՆԱՐԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

«Շորայէ ԽալիՖեգարի Արամանէյէ Իրան»

**30ԴԻԱԾ 17**

Թեհրանի Հայոց Թեմի սեփականութիւնը կազմող բոլոր Եկեղեցա-ազգապատկան շարժական ու անշարժ կայքը եւ գոյքը, ազգապատկան դպրոցների արտօնագրերը, բանքային ընթացիկ եւ աւանդ հաշիւները, արձանագրուում են Թեմական Խորհրդի միջոցով, պետական պատկան հաստատութեան մօտ պաշտօնապէս որպէս իրաւական Անձ գրանցուած ԻՐԱՆԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ, «Շորայէ ԽալիՖեգարի Արամանէյէ Իրան»-ի անուամբ:

**30ԴԻԱԾ 18**

Թեհրանի Հայոց Թեմական Առաջնորդը, Իրանահայութեան Ազգային Առաջնորդարանի Խորհրդի նախագահի իր հանգամանքով, նախագահում է նաեւ նոյն Խորհրդի Վարիչ Մարմինն, որի անդամները Թեմական Խորհրդի առաջարկութեամբ ընտրուում են Ազգային Առաջնորդարանի Խորհրդի ընդհանուր ժո-

դովի կողմից՝ պատկան կանոնադրութեան համաձայն:

### 3. ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ

#### 3ՕԴԻԱԾ 19

ա- Թեմակալ Առաջնորդը հոգևոր պետն է Թեհրանի Հայոց Թեմի եւ ընտրուում է Թեմի Պատգամատրական ժողովի կողմից՝ առանց պաշտօնավարութեան ժամանակի սահմանումի:

բ- Թեմակալ Առաջնորդն ի պաշտօնն նախագահն է Թեմի Պատգամատրական ժողովի, Թեմական Խորհրդի եւ նրանից բխած բոլոր մարմինների:

գ- Թեմակալ Առաջնորդը ղեկավարում է Թեմական Խորհրդի վարչական աշխատանքները կայացած որոշումների սահմաններում:

#### 3ՕԴԻԱԾ 20

Առաջնորդի ընտրութեան համար, Կիլիկիոյ Կաթողիկոսարանը ներկայացնում է առնագն երեք ընտրելի եւ տրամադրելի հոգեւորականների անւանացանկ, որի վրայից Թեմի Պատգամատրական ժողովը սոյն կանոնադրութեան Յօդւած 11-ի տրամադրութեան համաձայն կատարուում է Առաջնորդի ընտրութիւնը:

Նորընտիր Առաջնորդը Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կողմից հաստատւելուց յետոյ, ստանձնում է իր պաշտօնը:

#### 3ՕԴԻԱԾ 21

Առաջնորդը տնօրինում է Թեմի կրօնական գործերը եւ հսկում Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնների, կարգերի եւ ծեսերի անշեղ պահպանման եւ գործադրման վրայ:

#### 3ՕԴԻԱԾ 22

Առաջնորդը իրեն ներկայացած խնդիրները յանձնում է իրաւասու ժողովներին եւ մարմիններին առ ի քննութիւն եւ անհրաժեշտ տնօրինութիւն:

#### 3ՕԴԻԱԾ 23

Առաջնորդը կարող է իր բացակայութեան տրւած որոշումները վերաքննութեան ենթարկելու առաջարկ ներկայացնել պատկան ժողովին կամ մարմնին:

#### 3ՕԴԻԱԾ 24

Առաջնորդը հսկում է կանոնադրութեան ճշգրիտ գործադրութեան վրայ եւ կանոնագրային որեւէ խախտում նկատելու պարագային, խնդիրը յանձնում է պատկան ժողովի կամ մարմնի ուշադրութեան:

#### 3ՕԴԻԱԾ 25

Անհրաժեշտ է, որ Առաջնորդը ընկերակցութեամբ Թեմական Խորհրդի ներկայացուցիչների, պարբերական այցելութիւններ կատարի Թեմի բոլոր շրջաններին ու թաղամասերին, եւ այդ այցելութիւնների միջոցով վերահասու լինի՝ նրանց կրօնական, ազգային եւ հասարակական գործերի ու արդիւնքի մասին զեկուցի Թեմական Խորհրդին:

#### 3ՕԴԻԱԾ 26

Առաջնորդը թեմից բացակայում է թեմական խորհրդի գիտութեամբ: Առաջնորդական փոխանորդը նշանակում է Առաջնորդի առաջարկութեամբ եւ թեմական խորհրդի հաւանութեամբ: Առաջնորդի կամ տեղապահի Թեմից երկու ամսից աւելի բացակայութեան պարագային պետք է տեղեակ պահել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

#### 3ՕԴԻԱԾ 27

Աթոռը թափուր եղած միջոցին Պատգամատրական ժողովն ընտրում է Առաջնորդական Տեղապահ, Առաջորդական տեղապահի ընտրութեան արդիւնքը յղւում է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առ ի հաստատում: Առաջնորդական տեղապահին են անցնում սոյն կանոնադրութեամբ Առաջնորդի համար սահմանւած իրաւունքները: Առաջնորդ եւ Առաջնորդական Տեղապահ չունենալու պարագային, նրանց վարչական իրաւունքները եւ պարտականութիւնները փոխանցւում են Թեմական խորհրդին:

#### 3ՕԴԻԱԾ 28

Առաջնորդը կարող է հրաժարուել իր պաշտօնից, պայմանաւ որ այդ մասին առնագն երեք ամիս առաջ գրատր կերպով տեղեակ պահի թեմի Պատգամատրական ժողովին:

### 4. ՊԱԳԱՍԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

#### 3ՕԴԻԱԾ 29

ա- Պատգամատրական ժողովը Թեհրանի Թեմի գերագոյն իշխանութիւնը լինելով, բաղկանում է հոգեւորական եւ աշխարհական անդամներից, որոնց ընդհ. թիւ վեց եօթներորդը լինելու են աշխարհական, իսկ մէկ եօթներորդը հոգեւորական:

բ- Աշխարհական եւ հոգեւորական պատգամատրները ընտրուում են չորս տարւայ ժամանակաշրջանով եւ վերընտրելի են նաեւ յաջորդա-կան նստաշրջանների համար:

#### 3ՕԴԻԱԾ 30

ա- Թեհրան նահանգի հայաստանեաց Առաքելական Սուրբ եկեղեցու հայ համայնքը, իրաքանչիւր երեք հազար շնչի դիմաց ընտրում է մէկ պատգամատր, իսկ հազար շնչից աւելին հաշւելու պարագային ընտրում են երկու պատգամատր: Թեհրանի կամ շրջանների հայ ազգաբնակչութեան աննախատեսելի տեղաշաժի պարագայում ընտրելի պատգամատրների համեմատական թիւը, նշանակում է օրւայ թեմական խորհուրդը:

բ- Պատգամատրական ժողովի ամէն մէկ ընտրաշրջանի պատգամատրների թիւը, համաձայն վերոյիշեալ տւեալների, ճշտւում է սոյն կանոնադրութեան համաձայն կեանքի կոչւած ընտրական կենտրոնական յանձնախմբի միջոցով եւ թեմական խորհրդի հաստատումով:

գ- Պատգամատրական ժողովի անդամների թիւը ոչ մի դէպքում չի կարող 45-ից պակաս լինել: ■



Ստացված գրութիւն

«Լոյս» Երկշաբաթերի 3արդոյ Խնդագրութիւն

Թերթի 4-րդ համարի (15 Մայիսի 2000 Թ. ) լուրերի բաժնում, երբեմնի քահանայ եւ այժմ կարգալոյժ՝ Ռուբիկ Աւետեանի խնդրին կապող անվաւեր տեղեկութիւններ էին հրատարակել, որոնց ստորեւ տալով մեր բացատրական-պատասխանը, այն ուղարկում ենք առ ի տպագրութիւն:

1- Թէն ազգ. առաջնորդարանը ընթացք է տալիս թէկուզ մէկ ստորագրութիւն կրող նամակի, սակայն մեզ յանձնած նամակը կրում էր թով շուրջ 50 եւ ոչ՝ 250 ստորագրութիւններ:

2- Առաջնորդարանում ներկայացող քանի ազնիւ հայրե-նակիցների ցուցարեքած հետաքրքրութիւնը եւ պահանջատիրութիւնը գնահատելով, պիտի ասել, թէ՛ Սրբազան հայրը իր առաջնորդական առաքելութեամբ սիրով ընդունում է բո-լոր նրանց, ովքեր որոշակի խնդրով կուզեն հանդիպել իրեն, սակայն ամէն տեսակ խաչաձեւումից եւ ժամակորստից խուսափելու համար, նախապէս պատկան գրասենեակի հետ համադրումներ են կատարում: Ի դէպ՝ պիտի նշել, թէ յիշեալ օրը (ապրիլի 27-ին) Սրբազան հայրը այցելութեան ծրագիր ուներ Ն.Գիւրեմզեան դպրոց:

3- Եթէ եղել է ժամանակ, որ Սրբազան հայրը անհիմաստ է համարել նորից անդրադառնալ յիշեալի խնդրին, դա այն պահն է եղել միայն, երբ արդէն կարգալուծման վճիռը արձակւած եւ որոշման արդիւնքն անգամ հրատարակւած է եղել մամուլով ( տես, Այլը օրաթերթ-28 ապրիլի 2000թ. ): Եւ ինչպէս քահանայական ձեռնարկութեան, այնպէս եւ կար-գալուծման խորհրդի զգայնութիւնը յիշելով, կարծում ենք աւելի հասկանալի պիտի դառնար որոշման վերանայման անկարելիութիւնը:

4- Սրբազան հայրը երբեւ մէկին չի խոստացել երբեմնի քահանայ՝ Տէր Մուշեղին արտօսել Ջատիկին վերսկսելու հո-գեւոր իր ծառայութիւնը, սակայն դա ինքնաբերաբար պիտի իրականանար, եթէ նա անսալով Սրբազան հոր հրահանգին՝ աղօթքի եւ խորհրդածութեան առաջադրւած միանման ժա-մանակաշրջանը հնազանդութեամբ անցկացնէր, եւ ապաշ-խարութեան ոգով թողութեան շնորհը հայցէր Աստուծոց:

Սակայն, ցաւօք սրտի, ընծայած այս առիթին, նա ար-ձագանգեց անհնազանդութեան եւ ընքոստութեան պատաս-խանով:

5- Տարբեր առիթներով (ինչպէս եւ ապրիլի 11-ին «Հեշ-մաթի» քաղաքամասի սիրելի ժողովուրդի հետ կայացած Թեմական Խորհրդի հանդիպմանը ) հասարակայնութեանը տեղեակ է պահել խնդրի էութիւնը, սակայն կանխելու համար անհիմն եւ գայթակղիչ լուրերի տարածման վտանգը ( մեր կամքից անկախ ) հարկ ենք համարում կրկնել, թէ՛

ա- Կարգալոյժ քահանան, դեռ երկար ժամանակ ի վեր, ունեցել է անհնազանդ եւ ընքոստ վարքագիծ, չի ենթարկւել իրեն կարգադրած պատուիրաններին, եւ հակառակ գերա-շնորհ Արտակ Արք. Մամուկեանի հայրական խրատներին ու նկատողութիւններին յամառել է, շարունակել իր խոտոր ընթացքը, ինչը անյարիր է քահանայական սուրբ վար-ելակերպին, որը առաջին հերթին պիտի արտացոլի Յիսուս Քրիստոսի հեզութեան եւ հնազանդութեան ոգին:

բ- Չի արամադրուել լիարժէք կերպով կատարել եկե-ղեցական եւ քահանայական առօրեայ իր պարտակա-

նութիւնները, որոնցից են՝ տնօրհնէքի կատարում, հան-գրատարանում արարողութեան մասնակցում (իրեն աջա-կցող տիրացու շնորհունելով) նշխարի բաժանում եւ այլն:

գ- Հակառակ Գերշ. Տ. Մեայուս Ս. Եպիսկ. Մարգարեանի այն պարզաբանումներին, թէ քրիստոնէութեանը եւ մեր եկե-ղեցոյ կանոններին հաշտ չէ քահանայական զգեստը կրող հոգեւորականի առետրով զբաղելը՝ նա շարունակում է իր այս զբաղմունքը եթէ չասենք որպէս հիմնական, ապա իբրեւ երկրորդական աշխատանք, ինչը խլում է իրենից հոգեւոր լիարժէք ծառայութեան հնարաւորութիւնը:

Եւ համոզւած ենք՝ սրանք , եւ նման պատուիրանագն-ցութիւններն են, որ « ոտնահարում են ժողովրդի հոգեւոր իրաւունքները », որոնց ընթացքը կանխելու համար Սրբա-զան հոր նախազանգիւթեամբ գումարած Կրօնական եւ Թե-մական խորհուրդների համախառն ժողովի մանրագին քննարկումների արդիւնքը եղաւ՝ ոչ ցանկալի, բայց եւ ան-խուսափելի յայտնի վճռի կայացումը:

ՅԱՐԳԱՆՈ՞Ք  
ԹԵՐՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի հետեւումն մեր 12 մայիս 2000 թ. հաղորդա-գրութեան, այսու Թեիրանի հայ համայնքին տեղե-կացնում ենք, որ յանձնախումբս իր հերթական նիստերի ընթացքում քննութեան առարկայ է դար-ձրել՝ 12-րդ Պատգամաւորական ժողովի ընտրա-կան կանոնների որոշ կէտերը վերանայման են-ցարկել եւ այն յանձնել պատկան մարմիններին առ ի հաստատում: Այդ առընչութեամբ ծրագրուում է նաեւ ընտրական յանձնախմբի քարոզչական աշ-խատանքները եւ այլ վարչական հարցեր:

Ընտրական յանձնախումբը իր գրասենեակային մնայուն գրածքն է ստեղծել ազգ. Առաջնորդարա-նում, եւ Պրն. Սահակ Շահմուրադեանը նշանակել է յանձնախմբի գրասենեակի վարիչ:

Յանձնախումբը իր ծրագրաւորումը ամբողջաց-ելուց անմիջապէս յետոյ կունենայ մամլոյ ասու-լիս՝ նպատակ ունենալով մեր ժողովրդին առաւել տեղեակ պահել ընտրութիւնների կայացման գործընթացների մասին:

Յիմք ունենալով մեր նախկին հաղորդագրու-թեան մէջ նշւած տրամադրութիւնը, դարձեալ ա-կընկալում ենք սիրելի ժողովրդի գրաւոր առա-ջարկներն ու տեսակետներն ունենալ ընտրութիւն-ները բարեյաջող եւ լաւագոյն կերպով կայացնելու համար:


Սիրելի ժողովուրդ՝  
Ձեր առաջարկներով սատար հանդիսացէք մեզ, որպէսզի յարմարագոյն ձեւով՝ ընտրուի մեր համայն-քին արժանավայել Պատգամաւորական ժողովը՝  
ղեկավարելու համար Թեիրանի Հայոց Թեմի ազ-գային-հասարակական կենսաքին առընչուող աշխա-տանքները:

ԹԵՐՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
12-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒԲ

# Հանդիպում Թ.Շ.Թ. Պատգամաւորական Ժողովի անդամ՝ Պրն. Հրաչ Խոսրովեանի հետ

«Լոյս»-ի խմբագրութիւնը սիրով կը նդառաջի հանդիպել եւ մտերմիկ գրոյց ունենալ բոլոր նրանց հետ, ովքեր մեր համայնքին առնչուող ազգային խնդիրների շուրջ եւ գալիք պատգամաւորական ժողովի ընտրութեան վերաբերեալ տեսակէտներ կամ առաջարկներ ունեն:

Այս հանդիպումների ծիրի մէջ «Լոյս»-ի թղթակիցները անկողմնակալ շրջահայեացքով հարցազրոյց են կատարել յարգելի պատգամաւոր՝ Հրաչ Խոս-



րովեանի հետ, որը ստորեւ ներկայացնում ենք Ձեզ:

**Հարց-** Ներկայացել ենք Ձեզ մօտ, մի շարք համայնքային հարցերի շուրջ. նախ քան բուն նիւթին անցնելը, խնդրում ենք Ձեզ ներկայացնել:

**Պատ.-** Հրաչ Խոսրովեանն եմ, ծնել եմ 1944 թականին Քամարա գաւառի Սաքի գիւղում: Վեց տարեկանում ծնողներիս հետ փոխադրել եմ Թեհրան: Միջնակարգի շրջանաւարտ եմ ուսողական ճիւղում, նախքան ընկերութեան յարակից հաստատութեան փորձառու տեխնիկ գծագրիչ եմ: Ապրում եմ «Մասուն» հայահօծ թաղամասում, հոգեպէս կապած եմ նրա հետ եւ սիրում եմ նրան:

**Հարց-** Գիտենք, որ արդէն ամուսնացած էք եւ վայելում էք հայկական ընտանեկան քաղցր օջախը:

**Պատ.-** Այո՛, ամուսնացած եմ, կինս կոչւում է Արեւիկ, չորս զաւակներս՝ Նարինէ, Կոմիտաս, Սեդրիկ եւ Նարեկ: Աստուծոց ցանկացել էի չորս զաւակ, այդպէս էլ կատարեց:

**Հարց-** Ուրեմն ունեք մաքուր եւ զուտ հայկական ամուսններով ընտանեկան կազմ՝ տիտան մեծերի անմահացող անուններով զարդարած: Խնդրում ենք, ասացէք, թէ ինչպէ՞ս եղաւ, որ պատգամաւորական ժողովի թեկնածու դարձաք, ապա՝ անդամ եւ այդպիսով

սատար հանդիսացաք մեր համայնքի ազգային-հասարակական կեանքին:

**Պատ.-** Եիշտն ասած, դեռ մանկութիւնից հետաքրքրել եմ մեր ազգային խնդիրներով, մտահոգել եմ ազգիս համար, հայութեանս համար: Յիշում եմ Ֆրանսական մի գիրք «Փարդաեանա» անունով, որը շուալիէների սխրագործութիւնների մասին էր իրենց երկրի եւ ժողովրդի համար: Գիրքը շատ հետաքրքիր էր, միշտ մտածում էի, թէ մենք էլ պէտք է ունենայ կորովի հայրենասէր մարդկանց, որ անկաշառօրէն ծառայեն իրենց երկրին եւ ժողովրդին:

Ծառայութեան ոգին հետզհետէ սաղմնաւորեց իմ մէջ, նախ սկսեցի մարզանքից՝ Ֆուտբոլի խմբերի մէջ խաղալով, ապա տիրող մթնոլորտը ինձ մղեց դէպի հասարակական հարցերով հետաքրքրելը, այնպէս որ 15 տարի առաջ առաջադրեցի պատգամաւորական ժողովի համար եւ ընտրեցի:

**Հարց-** Պատգամաւոր ներկայացա՞ք:

**Պատ.-** Այո՛, մտածում էի որեւէ մի ձեւով օգտակար լինել իմ համայնքին

**Հարց-** Արդեօ՞ք կարող էք յիշել, թէ այս երկար տարիների ընթացքում Ձեր անդամակցած պատգամաւորական ժողովը ի՞նչ կարեւոր գործունէութիւն է կատարել, որ անմոռանալի է մնում Ձեր յուշերում:

**Պատ.-** Քիչ թէ շատ գործեր եղել են, որոնց չեմ կարող թել: Այն ինչ այս րոպէին յիշում եմ, մեր թաղում մանկապարտէզի եւ բուժարանի կառուցման համար իմ տւած առաջարկութիւնն էր: Մանկապարտէզը իրականացաւ, թեկուզ ոչ բաւարար, բայց ամենայնդէպս գորիցուցի: Բուժարանի կառուցումը, նկատի ունենալով «Գրիգորիս» բուժարանի եւ այլ բժշկական կենտրոնների ծառայութիւնների ձգձգեց, եւ վերջապէս մոռացութեան ենթարկեց:

**Հարց-** Պրն. Հրաչ, գիտեք, որ մեր պատգամաւորական ժողովի նստաշրջանը չորս տարի է, բայց դուք ասացիք, որ 15 տարի է ինչ այս պատգամաւորական ժողովը շարունակում է իր կեանքը, պատճառն ի՞նչ է եղել, որ ընտրութիւն չի կատարուել ժամանակին:

**Պատ.-** Արդէն տեղեակ էք, որ խնդրին առնչուող նախարարութիւնը թոյլ չէր տալիս պատճառաբանելով թեմիս կանոնագրութիւնը: Այժմ չկայ խոչընդոտ, եւ մինչեւ մի քանի ամիս յետոյ ընտրութիւնը տեղի կունենայ:

Ընտրական գործերը համադրելու եւ կատարելագործելու համար ընտրական յանձնախումբ է կեանքի կոչել:

**Հարց-** Այստեղ մի հարց է առաջանում, թէ ինչո՞ւ պետութիւնը չպիտի համաձայնէր ընտրութեան հետ, չէ որ մեր այս համայնքային դրածքը որեւէ անպատեհութիւն չունի, այլ հակառակը խօսումս վկայում է այն յարգանքի, որը տաժում է փոքրամասնութիւնների եւ յատկապէս հայ համայնքի նկատմամբ:

**Պատ.-** Սա արդէն մի այլ հարց է, որին կարելի է մի ուրիշ առիթով անդրադառնալ:

**Հարց-** ներկայ պատգամաւորական ժողովի աշխատանքները ինչպէ՞ս են ընթանում:

**Պատ.-** Առօրեայ կեանքի թելադրանքով: Մի ժամանակ քահանայի պակաս կար, որի մասին երկարբարակ խօսեց ժողովների ընթացքում հանգուցեալ լուսահոգի Արտակ Սրբազանի օրօք: Նոր քահանաներ ձեռնադրեցին, սակայն հիմա էլ գոհացուցիչ չէ պատ-

## Հասարակական

րաստած քահանաների թիւը, մանաւանդ բարձր կրթութեամբ հմուտ քարոզիչների կարիքն ունենք:

15 տարիների պատգամատրական ժողովի աշխատանքները բաւարար չեն նկատում, չեն կարող ասել շատ գոհացուցիչ է եղել, որովհետեւ, տեսէք, երկրի պայմանները մատն խնդիր են, հող պիտի լինի աշխատելու համար, ապառաժի վրայ չի կարելի ցանել: Դժբախտաբար այդ քանի տարիների ընթացքում պատրաստած հող չենք ունեցել եւ իմ սպասածի հակառակ պատգամատրական ժողովից լաւապէս արդիւնք չենք ստացել ու մեր թեմական խորհուրդները հեռատես քաղաքականութիւն չեն վարել:

**Հարց- Հիմնական ի՞նչ թերութիւններ են եղել, որոնք պատճառ են դարձել այսօրայ մեր վիճակին, որպէսզի մենք դա վերցնենք եւ չկրկնենք սխալները, ի՞նչ պիտի անենք գալիք պատգամատրական ժողովի համար:**

Պատ.- Չեմ ատում թերութիւններ չեն եղել, աշխատողը կը սխալի, եթէ արժանաւոր մէկը կանչի ազգի գործերի համար, բնականաբար սխալները քիչ կը լինեն: Թեկնածու եւ պատասխանատու մարդը որոշ չափով քաղաքագէտ եւ տեղեակ պիտի լինի երկրի վիճակից, ու մեր համայնքային խնդիրներից:

Առաջարկում են, պատգամատրական ժողովին մասնակցեն նրանք, ովքեր խօսել գիտեն, բարեհամբաւ են եւ ծառայելու ոգին կայ իրենց մէջ: Սրտի խորքում ազգային կամ կրօնական լինելը բաւական չէ, եթէ դու չկարողանաս քո մտածելակերպը արտայայտել, ժողովրդի պատգամը հասցնել եւ այդ ուղղութեամբ ելքեր մտածել, դա շատ դերակատար չի լինի: Ուրեմն արժանաւորներին գործի կոչենք, առանց որեւէ խտրականութեան որպէսզի մեր գործերը լաւ առաջ գնան:

**Հարց- Մտադիր էք արդեօ՞ք գալիք մատաշրջանի համար մատն թեկնածու դառնալ:**

Պատ.- Պէտք է ասեմ, դեռ այս առթիւ չեմ մտածել:

**Հարց- Արդեօ՞ք պատգամատրական ժողովին անդամակցութեան ընթացքում հանդիպումներ ունեցել էք Չերթաղի բնակչութեան հետ փոխանցելու համար ժողովի որոշումները, մտահոգութիւնները եւ անելիքները:**

Ինչպէս գիտէք, պատգամատրի պարտականութիւնն է թաղի բնակչութեան իրազեկ դարձնել երեւոյթների եւ անցուղարձերի մասին:

Պատ.- Հազարէկ են եղել մման հանդիպումները: Մեր թաղի պատգամատրներս չենք կարողացել լաւապէս համադրել մեր անելիքները եւ ժողովրդի հետ հանդիպումները:

**Հարց- Ուրեմն կարող ենք համոզուել, որ չկատարած քաւարար հանդիպումների եւ թափանցիկ չլինելու հետևանքով ժողովուրդը հեռու է մնացել խնդիրներից եւ լաւապէս տեղեակ չէ մեր թեմական դրացքին. որպէսզի չկրկնի այս թերութիւնը ի՞նչ ելք պէտք է մտածել, որ ժողովուրդը աշխուժանայ եւ իր աջակցութիւնը բերի աշխատանքներին:**

Պատ.- Առանկաբար հրատարակող թերթերի եւ յաճախակի հանդիպումների միջոցով: Միայն «Ալիք»-ը չէ, որ պիտի արտացոլի թեմական ժողովների որոշումները, այլ՝ առիթ պիտի տրուի միւս թերթերին մատն: Այսուամենայնիւ ժողովուրդը ինքն եւս պիտի հետաքրքրուի մեր համայնքի հարցերով եւ կարդա հրատարակող մամուլը:

**Հարց- Համայնքում կայ այսպիսի մի հարց, որ դեռ պարզաբանած չէ. դա 1988 թականի Հայաստանի անհատը երկրաշարժի պատճառով համայնքից հաւաքած գումարի մասին է, որը պիտի տրամադրուէր աղետալներին: Պատգամատրական ժողովը դրա մասին ի՞նչ որոշումներ է ունեցել:**

Պատ.- Ինչքան յիշում եմ, հաւաքած գումարի մի մասը իբրեւ բանկային չէր յանձնուէր պրն. Վարդան Վարդանեանին, որը փոխանցուէր Հայաստանի պետութեանը աղետալներին օգնելու համար, իսկ մնացած մասը ծորակաշինութեան գործարանի համար ծախսուէր:

Տատանման մէջ էինք թէ գործարանը ում հսկողութեան պիտի յանձնուի՝ Էջմիածնին թէ Հայաստանի պետութեան, այսպիսով գործարանը դեռ մնում է անգործածելի եւ փչացման վիճակում:

**Հարց- Պատգամատրական ժողովը արտագաղթի հետ կապած ի՞նչ ելքեր է խորհել, կամ ի՞նչ է որոշել,**



**այսինքն այս սպիտակ ջարդի դէմ պայքարելու համար ի՞նչ է մտածել:**

Պատ.- Լաւ յիշում եմ, որ այս մասին խօսուէր եւ հանգուցալ սրբազան հայրը մտահոգութիւն յայտնուէր, յարմար նկատուէր քարոզչութեամբ ժողովրդին լուսարանել, որ չգնան, քանի որ այդ խտտու ճամբաները դէպի ուժացում են տանում, եւ ընտրեն այն ճամբան, որով սերունդները ապրելու եւ գոյատեւելու են որպէս հայ:

Ներկայ վիճակը, ցոյց է տալիս, որ ժողովուրդն է որոշում իր ճակատագիրը եւ վերջնական որոշումները իրենք ընտանիքներն են, որ ընդունում են մման ճամբաներ: Արտագաղթի մարմնաջը կարելի է ասել գալիս է տարբեր պատճառներից, տնտեսական եւ այլ դժարութիւններից, սակայն որտե՞ղ մնաց մեր հոգեկան կապաւածութիւնը, կարելի՞ է դարերի յիշատակները թողնել եւ քամու բերանին տալ, ո՛չ, դա ուղղակի ապերախտութիւն է, եւ դաւանութիւնն քո ապրած երկրին, պետութեան եւ հայրենակիցներին: Ինչո՞ւ պիտի լքել մի երկիր, որտեղ ծնել ես, մեծացել, ուսում ստացել եւ մասնակից դարձել նրա ուրախութիւններին եւ ցատտ օրե-րին, այսր ինչո՞ւ պիտի թողնել ծննդավայրը... նոյնպէս թշուրը իր խղճակի վիճակով միշտ վերադառնում է իր հին բունը եւ վերանորոգում այն:

**Հարց- Մեր համայնքը այստեղ դարատր անցեալ եւ անբաժանելի կապաւածութիւն ունի, ինչպէ՞ս կարելի է մեր համայնքին այս անմխիթար վիճակից դուրս բերել եւ մշակութապէս եւ ու զեւ ստեղծել նրա կեանքում, այս ուղղութեամբ ի՞նչ էք մտածում:**

Շար. տեսնել էջ 19-ում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օրենսդրական աշխատանքի կը-տրրաձքով խորհրդարանի տեսա-դաշտում էին արեւմտահայերի ներ-գաղթի, բանակի զորացման, Արցա-խին օգնութիւն ցոյց տալու խնդիր-ները: Բազմաթիւ անգամներ վարկեր են քացել բանակի համար, երբեմն ամանց նախահաշիւների: Փորձ է արել ստեղծել սեփական ռազմա-կան արտադրութիւն: Վարաբաղի 8 մլն ռուբլի հիմնադրամից 1.5 մլնը հաստատուեց «Վարաբաղի զորա-մաս» կազմակերպելու համար:

Պատգամաւորների գործու-նութիւնը չի սահմանափակել միայն խորհրդարանի շրջանակ-ներում: Ե՛՛ր ամաջին, ե՛՛ր երկրորդ խորհրդարանում պատգամաւոր-ները անհատական կամ պատ-գամաւորական յանձնախմբերով գործուղել են տարբեր շրջաններ, տեղերում ուսումնասիրել, յետոյ ամաջարկութիւններ են ներկայացրել եւ այլն:

Հանրագումարի բելերով երկրորդ գումարման խորհրդարանի օրենս-դրական աշխատանքի արդիւնք-ները՝ կարելի է ասել, որ 1919 թ. երկրորդ կէսին՝ օգոստոսի 1-ից մին-չեւ դեկտեմբերի 31-ը, հրաւիրել է 56 նիստ եւ այդ ընթացքում հաստատել ընդամենը 117 օրէնք, այդ թում՝ մի քանի որոշում, իսկ 1920 թ. յունւարի 2-ից մինչեւ մայիսի 5-ը տեղի է ունեցել 32 նիստ եւ այդ ընթացքում ընդունել 85 օրէնք: Այսպիսով, երկու տարեշրջանները միասին ընդունել են շուրջ 200 օրէնք:

Երկրորդ խորհրդարանի գործու-նութեան վերջին եօթը ամիսները կարելի է համարել որպէս անգործու-թեան ժամանակաշրջան: Երբ 1920 թ. Մայիսեան ապստամբութեան կա-պակցութեամբ, խորհրդարանն ու-

ղարկում է հարկադիր ու տեսական արձակուրդ, դրանով էլ, փաստօրէն, դիմազրկում: ՀՅԴ Բիւրօն, հանրա-պետութեան քաղաքական իրավի-ճակը գնահատելով ճգնաժամային՝ մայիսի 5-ին ստանձնեց կառավա-րութիւնը: Արձակուրդ ուղարկելով խորհրդարանը՝ նա իւրացրեց նաեւ օրենսդրական իրաստութիւնները: Փաստօրէն հաստատուեց ՀՅԴ Բիւ-րօ- կառավարութեան դիկտատուրա:



Թէեւ Բիւրօ-կառավարութիւնն իր ընդունած մի շարք խիստ օրէնքնե-րով եւ վճռական պատժիչ գործողու-թիւններով ճնշեց բոլշեւիկների ա-պստամբութիւնը, սակայն իրաւաքա-ղաքական տեսակէտից երկրում կա-տարուեցին ժողովրդավարական ըս-կզբունքների մի շարք խախտումներ, որոնք թուլացրեցին պետականու-թեան հիմքերը: Դրան գումարեց նաեւ թուրք-հայկական պատերազ-մը, որի արդիւնքում Հայաստանը պարտուեց եւ չունենելով այլընտը-րանք՝ ընդունեց 11-րդ Կարմիր բա-նակի մուտքը երկիր եւ խաղաղ ճա-նապարհով խորհրդայնացուեց:

ՀՀ գոյութեան վերջին՝ նոյեմբեր ամսին, խորհրդարանը գումարեց ընդամենը չորս նիստ, որոնցում հիմ-նականում լուեցին պատերազմի ու խաղաղութեան եւ «ճախ» կոալիցիոն կառավարութեան ստեղծման մասին հարցերը: Այդ ճակատագրական պա-

հին էլ հայ քաղաքական շրջաններն ու ժողովուրդը իրենց փրկութեան վերջին յոյսը կապեցին Խորհրդային Ռուսաստանի հետ: Վիճակն այն-քան բարդ էր ու ճգնաժամային, որ պառակտուեցին ՀՅԴ շարքերը: Դրա հետեւանքով էլ ամաջացաւ «Ճախ դաշնակցականների» խումբը:

Հայաստանի Հանրապետութեան յետագայ ճակատագրի հարցը լուել է նոյեմբերի 30-ին եւ դեկտեմբերի 1-ին՝ երեկոյեան ժամերին: ՀՅԴ խորհրդարանական խմբակցու-թեան մասնակցութեամբ կայա-ցած խորհրդակցութիւն- նիստե-րում, ձայների ճնշող մեծամաս-նութեամբ, որոշուել էր խաղաղ ճանապարհով իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներին եւ երկի-րը խորհրդայնացնել: Հայ ժողովրդի ճնշող մեծամասնու-թիւնն ընթացեց պահի լքութիւնը եւ ընդունեց բոլշեւիզմը, քանզի ռուսբոլշեւիկ անւան տակ հասկա-նում էր միայն Ռուսաստան եւ ռուս ժողովուրդ: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երեսանի համաձայնագրի ստորա-գրումով իրաւապէս իր ուժը կոր-ցրեց ՀՀ բարձրագոյն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը:

Ահա այս ձեւով Հայաստանի խորհրդարանական-ռամկավարա-կան հանրապետութեանը փոխարի-նելու եկաւ Խորհրդային Հայաստա-նը: Այսպիսով, Հայաստանի Հանրա-պետութեան իրաւայաջորդ Խորհրդ-դային Հայաստանը, իր հակասա-կանութեամբ հանդերձ, դարձաւ յե-տագայ հայ պետականութեան միակ կրողը, համայն հայութեան հայրենի-քը, նրա Ֆիզիքական, հոգեւոր ու մշակութային վերընձիղման միակ յուսալի երաշխատորը:

Ճար.4 եւ 4երջ

# ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՍՏ ԱՂԻՔԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՅՆ ԿԱՆԽԵԼ

**Գրեց՝ Բրիտտին Գորման  
Թարգմանեց՝  
Լեւոն Ահարոնեան  
«Թայմ» Շաբաթաթերթից 20.03.00**



Հաստ աղիքի քաղցկեղը չարորակ ուռուցքների մեջ ամենից մահաբեր քաղցկեղն է եւ միաժամանակ ամենից առաւել կանխարգելին: Ահաւասիկ մի քանի տեղեկութիւններ այս հիւանդութեան եւ անսպասելիօրէն ցաւ չպատճառող մի քննութեան մասին, որը կարող է փրկել ձեր կեանքը:

Նիկ Լիսընը, մի խարոյախ առետրական էր, որը 1995-ին մի շարք ծախտը գործադրած ծրագրերի պատճառով, Բէրինգո Բանկի տապալման պատճառ դարձաւ եւ Բրիտանիա վերադարձաւ անցեալ յուլիսին, ինչպէս կերպարանափոխուած մի անձ: Նա իր 6.5 տարւայ ազատագրման դատավճիռի երեք տարին արդէն ծառայել էր Մինգապուրի Տանա Մերա բանտում, եւ այդ ընթացքում ենթարկել հաստ աղիքի չարորակ ուռուցքի վիրահատման:

Չնայած թում էր թէ նրա քաղցկեղը արդէն մահանջում է, սակայն նա շարունակում էր կանոնաւոր կերպով ստուգումներ կատարել:

Ալեխառն, կարճ կտրած մազերով 33 ամեայ այս պարոնը շատ աւելի ծեր է թում քան իր իրական տարիքը: Եթէ կրկին անգամ հիւանդութիւնը չտարածուի նրա մարմնում, ապա նա կատարելապէս կանգնած կը լինի բուժուած լինելու

քախտի առջեւ: Այս կարգի քաղցկեղի բուժման նորման 70 տոկոս է համարում եւ եթէ այն չկրկնի մինչեւ 5 տարի, հաւանական է քաղցկեղը մշտապէս բուժած լինի:

Լիսընը 20 տարեկանում իր մօրը կորցրեց թոքերի քաղցկեղի հետեւանքով, իսկ նրա հայրը ներկայումս տառապում է ոսկրածուծի քաղցկեղով: Այժմ Լիսընը, կամատր, աշխատում է Անգլիայի բարեգործական քաղցկեղի ուսումնասիրման մի կենտրոնում: Ընթացող հետազոտութիւններին նիւթապէս նպաստելու միտումով, նա մտադիր է մասնակցել ապրիլին կայանալիք Լոնդոնի վագրի մարատոնին:


«Մեծն Բրիտանիայում, Հաստ աղիքի քաղցկեղը ամենից շատ զոհեր խլող քաղցկեղների մէջ զբաղեցնում է երկրորդ տեղը», - ասում է Լիսընը, - «որս պատճառը, մասամբ կայանում է նրանում, որ մարդիկ կամ անտեսում են այստանջանները կամ էլ չգիտեն թէ ինչպէս պիտի մօտենալ

Համաձայն Լոնդոնի Հաստ աղիքի հետազոտութեան կենտրոնի գեկոյցի, հաստ-ուղղաղիքի (Colo-rectal) քաղցկեղը խլում է տարեկան 98500 զոհ եւրոմիութեան տարածքում եւ հանդիսանում է երկրորդ տարածուած հիւանդութիւնը տղամարդկանց մէջ:

Չնայած հիւանդութիւնը բարձր յաճախականութեամբ հարստում է 50-ից վեր տարիք ունեցողներին, բայց Լիսընի փորձառութիւնը ցոյց է տալիս, որ բացառուած չեն առաւել երիտասարդները:

Վիճակագրական տեւայները նախատեսում են, որ աշխարհում գալիք 12 ամսայ ընթացքում, 437000 հոգի կը մահանան այս հիւանդութեան հետեւանքով: Սակայն ուրախալի լուրն այն է, որ դա չպիտի անպայմանօրէն իրականանայ: Հիւանդութիւնը բուժելի է աւելի քան 90 տոկոսով, եթէ ուշադրութեան արժանանայ սկզբնական եւ առաւել բուժելի փուլերում:

Ամերիկայի «Քաղցկեղի հետազոտութեան կենտրոն»-ի նախագահ Կարոլայն Ալդիզեն ասում է, «Մա մի հիւանդութիւն է, որից չպիտի մահանայ որեւէ մէկը»: Այս պատճառը փոխանցելու, ինչպէս նաեւ ստուգողական քննութիւնների ենթարկելու քա-



լիւնդրին: Մասնակցելով մարատոնին ցանկանում են զարկ տալ թէ՛ դրամահաւաքին եւ թէ՛ հիւանդութեան մասին իրագրելութեանը», - աւելացնում է նա:

Լիսընի պարագան տեսած յիշեցումն է մի իրողութեան, որը մարդիկ յաճախ անտեսում են. որն է՝ հաստաղիքի, ներառեալ ուղիղ աղիքի քաղցկեղը, որը յաճախադէպ եւ խիստ մահացու հիւանդութիւն է:

չալերանքի միտումով Կատի Կուտիկը Էն.Բի.Մի հեռուստատեսային ցանցի ժողովրդականութիւն վայելող Today շոուի հաղորդավարը, որի ամուսինը երկու տարի առաջ, 42 տարեկանում մահացաւ հաստ աղիքի քաղցկեղից, ամէն առաւօտ հեռափառող շոուի ընթացքում ցոյց է տալիս իր իսկ աղիքների ներսից վերցրած Ֆիլմը:

**Ձառ. 1**

ԻՐԱՆԱՐԱՅ ԳՐՈՂՆԵՐ



ՂԱՐԱՎԵՐՋԻ ԼՈՐ ՏԱՐԻ

ԱՐՓԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ



Անճրեւից յետոյ, լուսամտից նայում եմ դուրս

Մաքուր օդ շնչելու: Մի ձեռք պարզում է դէմս. Հաց է սուրում: Կիսում եմ սեղանիս հացը, Տալիս նրան: Նա գնում է ծանր քայլերով: Ուտերիս վրայ ցաւ եմ զգում, Որ անցնում է սրտիս միջով: Մօտ է ամանորը, Պիտի փոխի դարը, Իսկ դու, մարդ, Նոր դարի Սեմին Թոթափիր վրայիդ մաղձերը Եւ ցոյց տուր կերպարդ մարդկային, Որ կորցրել ես վաղուց: Ի շահ նիւթապաշտութեան, Ի շահ արժանապաշտութեան Դու կորցրել ես տիփիւղ աստուածային: Վրէժ առ նրանից՝ քո իսկ թշնամուց՝ Թող չուրախանայ մեր մասնատումից: Ամանորը մօտ է, Ժամն է թողնելու հիանդ մտքերը: Եկ բարի սրտով Ընդառաջ գնանք գալիք նոր դարին Եւ Ամանորին:

Ձեռքերս կամուրջ եմ

Ձեռքերս կամուրջ եմ Միրոյ ճանապարհին, Եւ կը դիմանան ամբողջին, Որ կը գայ անցնի Մեր, բարեկամութիւն Փնտրելու համար: Հիմքերին կամրջի Դրել եմ սիրտ ու սեր Ու հաւատքով շարախել. Միայն իմանան բոլորն էլ, Որ անցնելու համար, Պէտք է անկեղծ ՄԷՐ:

«ԼՈՐ-ՂԱՐ» #2(32),2000թ

ՎԱՐԴԵՍ Տ.ՅՐՈՒԹԻՆԵԱՆ (Վ. Փառնոց )

Ծնել է 1924 թականին Եւտայում (Գրին): Բանաստեղծ Գեորգ Գողոխեանի հարազատն է: Տարրական ուսումն ստացել է Գանձակի ռուսական դպրոցում: 1935 թականին ընտանիքի հետ փոխադրելով Իրան, կրթութիւնը շարունակել է նախ Թարիզի «Թամարեան», ապա Թեհրանի «Թամարտոն» դպրոցներում, այնուհետեւ ասարտել է «Ալբորզ» բարձրագոյն ուսումնական հաստատութիւնը:



Ուսման տարիներին հայկական դպրոցները փակած լինելով, մի խումբ համախոս դասընկերների հետ, Յակոբ Կարապետցի գլխավորութեամբ հիմնում են «Լոյս եւ Միտք» պատանեկան մշակութային միութիւնը, նպատակ ունենալով զարկ տալ հայ գիր ու գրականութեանը:

1946 թականից սովորել է Թեհրանի Համալսարանի լեզուաբանական ճիւղում, զուգընթաց հետեւում է նաեւ «Քենթրիջ» լեզուաբանական գիշերային դասընթացներին եւ ստանում միջազգային արժէք ունեցող վկայական:

Գեռնու տասը տարեկանից ռուսերէն բանաստեղծութիւններ է գրել, նկիրած իր ծննդավայրին:

Նրա ստեղծագործութիւնները լոյս են տեսել «Նոր-հասկեր» մանկա-պատանեկան ամսագրում, «Ալիք» օրաթերթում եւ Պոլսի «Քուլիս» հանդէսում, որոնց տարիներ աշխատակցել է նա ինքնուրոյն եւ թարգմանական գործերով: Զբաղւում է նաեւ գեղանկարչական գործերով:

Հիմնադիր անդամ է Հ.Մ.Արարատ կազմակերպութեան:

Անդամ է Իրանահայ գրողների միութեան:

Ներկայացնում ենք Վ. Տէր Յարութիւնեանի թարգմանութիւններից մէկը:

ՍԿԻՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ

L. Տոլստոյ

Գարնանային մի գեղեցիկ օր էր: Մարի լամջին փարթամ անտառը շողջողում էր արեգակնային ճառագայթների տակ:

Անտառում մեծ աղմուկ կար: Գարնան մեղմ օդը, անտառային բնակիչներին թարմացրել ու զարթացրել էր: Թռչունները ճիւղից ճիւղ ուրախ թռչկոտելով երգում էին: Մոխակները դայլայլում էին... Փառիկամազ սկիւռն էլ, իր երկար թաւամազ պոչով, մի մեծ ծառի ճիւղի վրայ ուրախ ու անհոգ ցատկոտում էր, բայց... յանկարծ սայթաքեց ու ընկաւ ծառի տակ պատկած բնակույթ գայլի վրայ...

Գայլը վեր ցատկելով բռնեց նրան ու տոնարով ասաց.

- Դու ինչո՞ւ իմ քաղցր քունը խանգարեցիր, հիմա ես քեզ պատառ-պատառ կաննեմ:

Սկիւռը, որ անակնկալ ձեւով ընկել էր գայլի ճիրանների մէջ, դողդոջուն ու նազ ձայնով աղերսեց գայլին:

-Խնդրում եմ, արձակիր ինձ, չէ՞ որ ես քեզ երբէք վատութիւն չեմ արել, ես կեանքումս ոչ մէկին վատութիւն չեմ արել... ես մի անմեղ կենդանի եմ...

Գայլը, որ բաւական կուշտ էր եւ ուտելու ախորժակ չուներ, ասաց,

- Ես քեզ կարձակեմ, բայց պայմանով, որ դու ինձ ասես, թէ ինչո՞ւ դուք բոլոր սկիւռներդ այդքան ուրախ էք ու զարթ, իսկ ես միշտ տխուր եմ ու տըրտում, ես ձանձրոյթից տառապում եմ, չգիտեմ ինչ անել... Բայց երբ նայում եմ ձեզ զարմանքով տեսնում եմ, որ դուք վերեւում, ծառերի ճիւղերի վրայ ուրախ ու զարթ խաղում էք ու ցատկոտում:

Սկիւռը շնչակտուր պատասխանեց.

- Նախ թոյլ տուր ես բարձրանամ ծառը, ապա, յետոյ այնտեղից քեզ ասեմ պատճառը... ես վախեցնում եմ քեզանից, քո ճիրաններում անկարող եմ խօսել...

Գայլը, որ ուզում էր իմանալ նրանց ուրախութեան պատճառը, արձակեց սկիւռին, եւ սկիւռը մի ակնթարթում բարձրացաւ ծառը. նստեց ճիւղերից մէկի վրայ եւ իրեն ասպանով զգալով ասաց.

- Դու միշտ տխուր ես ու տըրտում, որովհետեւ չարասիրտ ես. չարութիւնը քեզ տանջում է ու մաշում քո սիրտը... իսկ մենք սկիւռներս ուրախ ենք ու զարթ, որովհետեւ բարի ենք ու ոչ մէկին չարիք չենք պատճառում: Գայլը սկիւռի խօսքերը լսելուց յետոյ զուլիւր կախ, ամօթահար հեռացաւ ծառի տակից:

Թարգմանեց՝ Վ.Տէր Յարութիւնեանը

ՀԱՆԴԻՊՈՒԲՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ  
ՀԵՏ



Ինչպես նախապես տեղեկացրել էինք Հայաստանից թեհրան ժամանած մի խումբ գեղանկարիչներ թեհրանի «Ազադի» համալիրում իրենց բարձրարևեստ եւ հետաքրքիր աշխատանքները ի ցոյց էին դրել թեհրանի

արևեստագետների ուշադրութեանը:  
Ներկայ լինելով այդ ցուցահանդեսին, որոշեցինք հարցազրոյց ունենալ նրանց հետ:  
Լոյս.- Նախ շնորհակալութիւն ենք յայտնում «Լոյս» երկշաբաթաթերթի անունից հարցազրոյցին մասնակցելու համար:

Հ.- Ի՞նչ նպատակով էք ժամանել Իրան:  
Պ.- Մարտին Տօնոյեան,- Հիմնական նպատակը եղել է հետեւեալը՝ ծանօթանալ երկու ազգերի արդի մշակույթների հետ: Եւ այս գործի նախաձեռնողներն են եղել Իրանի Իսլամական հանրապետութեան դեսպանատունը եւ Հայաստանի նկարիչների միութիւնը: Այստեղ մենք



ներկայացնում ենք 80 անուն աշխատանք՝ տարբեր թեմաներով:

Հ.- Վերոյիշեալ նկարները նկարել են յատուկ այս ցուցահանդեսի համար, թէ դրանք վաղուց են նկարած եղել:

Պ.- Մարտին Տօնոյեան,- նկարներից մի մասը նախօրօք եղել են, իսկ միւս մասը նկարել են յատուկ այս ցուցահանդեսի համար:

Հ.- Իսկ այս նպատակով որեւէ ցուցահանդեսի նախաձեռնութիւն տեղի կունենա՞յ Հայաստանում:

Պ.- Այո, դա կը լինի աշնանը՝ սեպտեմբեր ամսին: Իրանցի չորս նկարիչներ հրաւիրած են Երեւան՝ Հայաստանի նկարիչների տանը կայանալիք ցուցահան-

դեսներից մէկին մասնակցելու նպատակով: Եւ յոյս ունենք, որ նոյն յաջողութեամբ մեզ մօտ եւս կընդունի Իրանի նկարիչների աշխատանքները:

Հ.- Բացի գեղանկարչական ոճից ուրիշ ի՞նչ ոճի աշխատանքներ էք ներկայացնում:

Պ.- Մենք, ինչպէս արդէն նշեցինք, միայն ներկայացրել ենք գեղարեստական ոճով աշխատանքներ, մենք իրապաշտական արեստի ներկայացուցիչներ ենք, եւ արստրակտ ոճով նկարած աշխատանքներ չենք ներկայացրել: Հիմա սփիւռքը ունի գեղանկարչական արեստի կարիքը, մանաւանդ, որ հիմնականում մեր աշխատանքները նկարած են Քրիստոնէութեան 1700 ամեակին: Չնայած, որ իւրաքանչիւր նկարիչ մնացել է իր ոճին հարազատ, բայց այնուամենայնիւ այսօրայ նկարչական լեզուն եւ հասկացութիւնը անպայմանօրէն կիրառել է իւրաքանչիւր աշխատանքի մէջ:

Հ.- Այն աշխատանքները, որոնք թեմայից դուրս են նկարել եւ պատկերում են հայկական ժողովրդական հեքիաթները, կոնկրետ որ հեքիաթներն են պատկերում:

Պ.- Ռոբերտ Այւազեան,- Դրանք նկարել են «Փարւանայ», «Հուրի-Փերի», «Հերոսի վերադարձը», «Հազարան բլբուլ», «Չարի վերջը» հեքիաթների թեմաներով:

Հ.- Չե՞ր ներկայացրած աշխատանքներում կան նաեւ լուսանկարներ, ինչո՞վ կը բացատրէք այս հանգամանքը:

Պ.- Այւազեան,- Երեւանում եղած «Կապոյտ» մզկիթի լուսանկարներն ենք նկարել: Եւ ինքս անձամբ եմ պատրաստել եւ հիմա էլ ներկայացնում եմ Իրանի ժողովրդին: Այդ լուսանկարները պատրաստած են փայտից ու գունաւոր ապակուց, որոնք կոչւում են վիտրայ: Իսկ միւս լուսանկարներում պատկերած են մանկական այգու լուսանկարները, որոնք խորհրդանշում են տարւայ չորս եղանակները:

Արարատ Խանգաղեան (Սերո Խանգաղեանի որդին)

Հ.- Սերո Խանգաղեանն էլ է զբաղեւ՞ նկարչութեամբ:

Պ.- Ոչ, ցաւօք սրտի, ինքը չէր նկարում եւ ցանկանում էր եւ էլ գնայի իր ճանապարհով, բայց չգնացի, եւ երբեմն զղջում եմ այդ մասին, քանի որ նկարչի ճանապարհը շատ աւելի խրթին է, համեմայն դէպս չեմ հիասթափուել եւ չեմ փոշմանել:

Հ.- Ինչպէ՞ս եղաւ, որ դուք յատկապէս ընտրեցիք նկարչութեամբ զբաղելու ուղին:

Պ.- Այն բակում, որ եւ մեծացել եմ, նկարիչների արեստանոց կար, եւ եւ դեռեւս փոքր հասակից այդ արեստանոցի պատուհաններից ներս էի նայում, իսկ այդ աշխարհը ինձ համար հանելուկային էր թում, բացի այդ իմ մէջ էլ կար նկարելու շնորհք, եւ եւ որոշեցի այն զարգացնել: Այդ ժամանակ յիշեալ արեստանոցում երիտասարդ աշակերտներ կային, որոնցից մէկն էլ Արա Շիրազն էր: Նրանք ինձ օժանդակեցին եւ որոշ ուղղութիւններ տուցին: Արդէն 16 տարեկանում եւս ընդունեցի գեղարեստի ինստիտուտ, ուր շարունակեցի ուսումս: 1976-ին դարձայ նկարիչների միութեան անդամ, այժմ դեկավարում եմ գեղանկարիչների միութիւնը, որը ունի մօտ 450 անդամներ:


Հ.- Երբ նկարչական ասպարեզում յաջողութիւններ ձեռք բերեցիք, ձեր հայրը չէ՞ր դժգոհում:

Պ.- Ոչ, երբէք:

Հ.- Իսկ դուք որեւէ գրական ստեղծագործութիւն ունե՞ք:

## Մշակույթ

Պ.- Այո, որոշ բանաստեղծություններ գրել եմ, բայց ոչ տպագրել է, ոչ էլ արտասանել եմ, միայն երեք մտերիմներիս շրջապատում: Մէկ օր այդ տետրակս հօրս ձեռքն ընկաւ, եւ նա ասաց,- «Արարատ տանենք, թող լոյս տեսնեն անպայման», ես չհամաձայնեցի: Բայց վերջերս որոշել եմ գեղանկարիչների բանաստեղծությունների գրքերոյկ լոյս ընծայել, ուր կը լինեն նաեւ իմ բանաստեղծությունները:



### Հ.- Իսկ ինչո՞վ են զբաղւում ձեր որդիները:

Պ.- Մեծ որդիս՝ Արեգը դիւանագիտական ասպարէզում է, իսկ կրտսերը՝ Վահագնը, սովորում է Երեւանի պետական մանկավարժական ինստիտուտի գեղարեստի բաժնում: Նա ուզում է իմ գործը շարունակել: Ես յոյսով եմ, որ Վահագն Խանգաղեանին եւս տարիներ յետոյ բախտ կը վիճակի ի ցոյց դնել իր աշխատանքները ցուցահանդէսում, ինչպէս մենք ենք անում այսօր:

**Իսկ Այսեր Մատթոսեանն արտայայտուեց հետեւեալ կերպով:**

Յուցահանդէսի բացումը լաւ էր կազմակերպւած, տպատրութիւնը լաւ էր, վատ չէր, բայց այստեղի հայութիւնից մենք աւելի մեծ սպասելիքներ ունէինք, նրանք շատ պասիւ էին, բայց մշակոյթն է, որ ժողովրդին կապում է իրար: Յանկութիւն կար, որպէսզի բոլորը գային հաղորդակցելին մեր արւեստի հետ, տեսնէին, թէ այս ծանր եւ դժարին օրերին հայ արւեստագէտները ջանք չեն խնայում մեր արւեստը, մեր մշակոյթը բարձր պահելու համար: Մեզ հետաքրքրում է մեր ժողովրդի մտածելակերպը, հոգեկանը, կենցաղը՝ Սփիւքում: Եւ վերջապէս գալիք սերունդին ի՞նչ դաստիարակութեամբ են մեծացնում: Մեր նպատակն է ամբացնել, աւելի կայուն դարձնել Սփիւքի եւ Հայրենիքի միջեւ եղած կապերը:

Իսկ իրանահայութեանը ցանկանում եմ յաջողութիւն, առողջութիւն, թող միշտ լաւ լինեն: Հայաստանում ապրող մտաւորականներս, արւեստագէտներս սիրում ենք մեր ժողովրդին, մոլորակի որ ծոցում էլ, որ լինեն: Մենք ձեզ սիրում ենք հոգով, զգացմունքով, կեանքով, եւ ամէն ինչով:

*Հարցազրոյցը վարեց  
Անի Նազարեանը*

## Բարձրունք մի վսեմ

Մեր սուրբ լեռները սէզ են, երկնահաս, յաւերժականգուն,  
Վեհութիւնը մեզ, Աստուած, հէնց ինքն է, շնորհել կեանքում,  
Որ Մասիս սարի վսեմ գագաթից շաչի հրահանգ  
Եւ ազդարարի համայն աշխարհին, թէ մենք ողջ ենք՝ կանք:

Մենք չենք երազել պիղծ աշտարակը՝ մեծ Բաբելոնի,  
Ոչ էլ բուրգերն են հին Եգիպտոսի մեզ հրապուրել,  
Մեր վեհութիւնը այնպիսի շքեղ շուք ու փայլ ունի,  
Որ Եղեմնալոյս Դրախտն այնտեղ է ծաղկել ու բուրել:

Մենք չենք ձգտում իսկ շէնքեր կառուցել՝ հրաշք, երկնաքար,  
Թող չզարմացնի շէն Նիւ-Եորքը հային շինարար,  
Մեր սուրբ Հաղպատի կառոյցն աւելի երկնամերձ է, վեր,  
Որի դէմ գլուխ է դեռ խոնարհում աշխարհն այս արար:

այոց փառապանծ.

Պէտք չի մեզ դիզել ոսկի, ադամանդ,ու ահռելի գանձ,  
Մեզ բաւական են մեր սուրբ վանքերը՝ լքւած, ամայի,  
Որ բեկւած սրտով դարձին են նայում տարագիր հայի:

Հայոց լեռները սէզ են, երկնահաս, Բարձրեալի կանքով,  
Իսկ հեզ հայրորդին դեռ տառապում է թափառիկ կեանքով,  
Թափառում է հեզ, տարագիր կեանքով ու հառաչում Միս,  
Այն հավատամքով, որ պիտի ելնի սիգապանծ Մասիս:

Միրոս հանք տուք ինձ քնար անեմ,  
Մասիս երգեմ, սարերն ինձ սնար անեմ,  
Թէ քարացաւ սիրտն իմ, առանց Մասիսի,  
Մասիս նետեմ սիրտս ու դարդիս ճար անեմ:

Յուշ հարաւում պանդուխտ հայիս հիւսիսացաւ Մասիսը,  
Հիւսիս անցայ յանուն Մասիս, պանդխտացաւ և Միսը,  
Հարագատ չեն կարօտ հայիս արևելքն ու արևմուտք,  
Էլ ո՞ր գնամ որ չկան, ինձ հարաւն ու հիւսիսը:

*Անդրանիկ Ռ. Չաքարեան*

## ՄՊԻՏԱԿ ՍՐԱՇ

تالار پذیرایی سفید  
آماده پذیرایی از جشنها و مجالس در تالار و  
منزل با کیفیت عالی  
جاده دماوند خیابان وحیدیه  
پلاک ۵۶  
تلفن ۷۸۱۶۴۹۱



# Մինչև հայկական դպրոց դառնալը...

**Հարցազրույց Ալմինի հետ**



*Լոյս-Ֆայոց լեզվի առարկայի քննությունների վերաբերյալ առիթ ունեցանք զրուցելու «Նայիրի» ուղեցոյց դպրոցի ուսուցիչ, իրանահայ բանաստեղծ՝ Պրն. Ալմինի (Ալբերտ Միրանեան) հետ:*

**Հարց- Պրն. Ալմին գիտե՞ք, որ Դուք քրտնաջան աշխատանք էք տանում, որպեսզի հայերեն լեզվի կրթութան մակարդակը բարձրանայ դպրոցում: Այսօր արդեն աւարտել են այս տարւայ հայոց լեզվի առարկայի քննությունները, կարո՞ղ ենք իմանալ, թէ ինչպէս է ընթացել այն, և մախտրոդ տարիների համեմատ նկատել է արդեօ՞ք կրթութան մակարդակի աճ:**

Պատ.-Բարեբախտաբար, պիտի ասեմ, հակառակ նրան, որ հայերենի դասաժամերը սահմանափակ են դպրոցում և մեզ մօտ՝ «Նայիրի» ուղեցոյց դպրոցում շաբաթական պարապում ենք 4 դասաժամ և հայոց լեզվի տարբեր բաժիններ, ունենք ըզգալի թով աշակերտներ, որոնք այսպէս, թէ այնպէս, հետաքրքրւած են հայերենով և սովորում են: Բայց սա կախւած է նաև ընտանիքներից: Փորձառութեամբ են արտայայտում, եթէ ընտանիքը հետաքրքրւում է հայերենով, լաւ դաստիարակում և, ընդհանրապէս, եթէ հայերենը կարևորում է ընտանիքներում, դա արտացոլւում է դպրոցում երեխայի աշխատանքների մէջ և մենք կարողանում ենք զգալ և տեսնել այդ հետաքրքրութիւնը: Բայց պիտի ցաւով ասեմ, որ ունենք նաև նորից զգալի թով աշակերտներ, որոնք պէտք եղած հետաքրքրութիւնը կամ կարևորութիւնը չեն ցուցաբերում հայերենի նկատմամբ: Պարզապէս նրանք հայոց լեզուն երկրորդական առարկայ համարելով չեն սովորում և աւելի են կարևորում պարսկերեն դասերը, որովհետև վերջինիս թւանշանները իրենց փոխադրման մէջ մեծ դերակատարութիւն ունեն: Մի բան որ հայերենը՝ ցաւօք, չունի: Այս պատճառներին պիտի գումարել նաեւ հայ ծնողների անտարբերութիւնն ու անփութութիւնը: Երբեմն մեր ծնողները կարող է չհամաձայնեն, բայց սրանք իրականութիւններ են, որ պէտք եղած

կարևորութիւնը ընտանիքի կողմից չի ցուցաբերում, և բնականաբար աշակերտները հայոց լեզվին այն պէս որ հարկ է կարևորութիւն չեն տալիս:

Ես պէտք է ասեմ, որ կրթութան որակի տարբերութիւնը անցեալ տարիների նկատմամբ մեծ չէ, քանի որ մեր պայմանները շատ չեն փոփոխւել: Անշուշտ երկու հայ նորեկ երիտասարդ փոխտեսուչների շնորհիւ մասամբ բարելաւեց, եւ բարեփոխւեց դպրոցի պայմանները: Ամէն մի հայ դաստիարակ, ամէն մի հայ փոխտեսուչ, որ ներս է մտնում դպրոց, բնականաբար, իր աշխատանքով բարելաւում է պայմանները, սակայն մենք դեռ մինչև հայկական դպրոց դառնալը, կարծում եմ, երկար ճանապարհի պիտի անցնենք:

**Հ.-Լսել ենք, որ Ձեր ուսուցման ձևը տարբերւում է միւս ուսուցիչների կիրառւած ձևերից և ամէն տարի քարմացնում և փոխում էք ձեր ոճը: Հետաքրքիր է իմանալ, թէ այս ուսումնական տարում ի՞նչ ձևերից էք օգտւել կրթութան որակը բարձրացնելու նպատակով:**

Պ.-Ես այն բախտաւոր ուսուցիչներից եմ եղել, որ երկու անգամ, որպէս ուսուցիչ, առիթ եմ ունեցել Հայաստանում «Կատարելագործման ինստիտուտ»-ի դասընթացներին մասնակցելու, որոնք թէկուզ կարճատև էին, բայց, բարեբախտաբար, ուսուցանող շատ բաներ ունեցան ինձ համար: Այն ինչ այնտեղ ես տեսայ մեթոդաբանութեան տեսակետից (դասաւանդման ձևեր և այլն), ներառում եմ իմ գործունէութեան մէջ և, բարեբախտաբար, արդիւնքն էլ լաւ է եղել: Աշխատում եմ հայերենը էապէս զանազան ձևերով աւելի սիրելի դարձնել, յատկապէս երեխաների հետ մտերմիկ հարաբերութիւնների շնորհիւ: Ես աշխատում եմ շոշափելի դարձնել երրորդ հազարամեակի սկզբի այն իրականութիւնը, որ ամէն մի ազգի անհատ պիտի հպարտանայ իր մայրենիով, իր սեփականով, իր մշակոյթով, իր գիր ու գրականութեամբ, իր արեստով: Աշխատում եմ այս ամէնի սիրելու գաղափարը, եթէ հնարատր լինի, փոխանցեմ իմ սաներին: Ընդհանրապէս, երբ ուսուցիչը սիրով ու հատուով է աշխատում, ես կարծում եմ այսպէս, թէ այնպէս, նրա աշխատանքները յաջողութեամբ է, պսակւում: Ես ինձ դեռ լրիւօրէն յաջողած ուսուցիչ չեմ համարում, բայց աշխատում եմ այդ ուղղութեամբ:

**Հ.-Քննութեան կամ ուսման ընթացքում նկատել է՞ք որոշ դժարութիւններ, որոնք կարելի է վերացնել:**

Պ.-Քննութիւններ անց կացնելու մէջ մենք, բարեբախտաբար, յատուկ դժարութիւն չունեցանք. հարցերը եկան առաջնորդարանից, որոնք նախապէս պատրաստել էին ուսուցիչների կողմից, որոնցից մէկն էլ ես էի: Մենք հարցերը ուղարկեցինք Կրթական Խորհրդին, յետոյ դրանց միջից ընտրութիւն եղաւ, քննութեան հարցերը կազմեցին և բաւական խնամւած ուղարկեց դպրոցներին. քրննութիւնների անցկացումը շատ յաջող էր: Մեր դպրոցում հայ վերակացուների համագործակցութեան շնորհիւ ամէն ինչ լաւ ընթացաւ: Մասնատր դժարութիւն յատուկ չեն եղել եւ նորից պիտի նշեմ, որ այն աշակերտները, որոնք հայերենը կարևորելով սովորել էին և պատրաստւած եկան մասնակցելու քննութիւններին՝ անշուշտ իրենց արդիւնքն էլ ստացան և հակառակը:



**Հ. -Իսկ Հայերենից վերաքննութիւն ունեցող աշակերտներ շատ ունե՞ք դպրոցում:**

Պ.-Ես գոնէ երրորդ դասարանցիների կապակցութեամբ կարող եմ ասել, որ մենք 70% փոխադրւածներ ունեցանք. 117-ից 82-ը փոխադրեցին: Հայերենի վկայականների վրայ «փոխադրւած» կամ «վերաքննելի» կնիքն ենք խփում: Վերաքննելիների համար օր ենք նշանակել. նրանց արդէն տեղեկացրել ենք, որ պիտի գան վերաքննութեան: Յատկապէս ծնողներից էլ պահանջել ենք, որ կարևորութիւն տան վերաքննութիւններին: Բայց գիտե՞ք, վերջին հաշուով, մէկ մասը մասնակցում է, իսկ մէկ մասն էլ, դժբախտաբար, վերաքննութեանը ևս կարևորութիւն չի տալիս:


**Վերջում շնորհակալութիւն ենք յայտնում «Լոյս» երկշաբաթաբերի կողմից և էլ աւելի ուժ ու եռանդ ենք ցանկանում Ձեզ գալիք ուսումնական տարում:**

*Հարցազրույցը Կարեց՝ Ս. Համբարձումեանը*

# Ռազմիկ Գոլեցեանի յիշատակին

*Լոյս.- Ի ցաւ մեզ բոլորիս, տեղեկացանք, որ մեզա-  
նից առշաւտ բաժանել է Հայաստանի ընթշամարտի  
հանրայայտ մարզիչ պրն. Ռազմիկ Գոլեցեանը: Այս  
առիթով դիմեցինք ՐաՖՖի մարզամշակութային հա-  
մալիրի վարչութեան անդամ պրն. Պ. Աբգարեանին եւ  
խնդրեցինք նրա մասին տեղեկութիւններ փոխանցի  
մեր ընթերցողներին:*

Թղթակից.- Պրն. Աբգարեան մախ որպէս հարազատ  
մարդու ընդունեք մեր ցաւակցութիւնը: Կը խնդրէինք  
ներկայացնել հանգուցեալի կենսագրութիւնը եւ տալ ձեր  
տպատրութիւնը նրա մասին:



Հանգուցեալ Ռազմիկ Գոլեցեանը կանգնածների  
շարքում՝ ձախից երրորդը

Պրն. Աբգարեան.- Ռ. Գոլեցեանի հետ մենք առաջին  
անգամ հանդիպեցինք, Հայաստանում եւ դա 1996 թա-  
կանին էր: Նա առաջին հանդիպման ժամանակ մեզ վրայ  
մի անջնջելի մեծ տպատրութիւն թողեց: Ես անձամբ չէի  
պատկերացնում որ ընդամենը 4 տարուց յետոյ նրան  
այլեւս չպիտի տեսնեմ եւ այսօր նրա բացակայութեան  
պարտաւոր եմ նրան յիշելու միայն յուշերով:

Նրա կեանքից անցել էր ընդամենը 50 տարի, սակայն  
կարծես 100 տարւայ փորձառութիւն ունենար: Երբ նրան  
ՐաՖՖի միութեան կողմից հրաւիրեցինք որպէս ընթշա-  
մարտի մարզիչ, դա շատերին զարմանք պատճառեց: Չէ  
որ այս առումով Իրանը դատում է լաւագոյնների շարքին  
եւ հարց էր ծագում թէ Հայաստանից ժամանած մարզիչը  
ի՞նչ առանձին տպատրութիւն պիտի թողնի իր տարած  
աշխատանքներով կամ ունեցած գիտելիքներով: Սակայն  
ի զարմանք այդ մարդկանց, նա կարճ ժամանակում ապա-  
ցուցեց, որ մեր ընտրութիւնը իրօք տեղին է եղել: Իրա-  
նում այս մարզաբքի մասնագէտները սկսեցին հետա-  
քրքրել նրանով եւ նոյնիսկ հանրայայտ մարզիչներ նրա  
մօտ էին գալիս խորհուրդներ լսելու համար:

Արայիկ Գեորգեանի մարզիչը կարճ ժամանակում ա-  
պացուցեց, որ բախտի բերմամբ չէր, որ իր սանը օլիմպի-  
ական չեմպիոն է դարձել:

Նա մեզ մօտ այնպիսի նւիրածութեամբ էր աշխատում  
եւ հոգատարութեամբ վարում սաների նկատմամբ, որ  
համոզում էիր նա ոչ թէ մարզում, այլ մարզանքով ապ-  
րում էր: Իր սաների ամենափոքր յառաջադիմութիւնը  
նրա աչքից չէր վրիպում:

Ափսոս, հազար ափսոս, որ լաւ մարդկանց կեանքը  
կարճ է լինում...

Այսպէս եզրափակեց պրն. Աբգարեանն իր խօսքերը:

*Թղթակից՝  
ՐաՖՖի Օրոգեան*

## ԸԱՅ ՄԱՐԶԻԿՈՒՇԻՆԵՐԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

*Լոյս.- Այս տարի Թեհրանի «Արարատ» մարզաւա-  
նում տեղի ունեցած հայկական համադպրոցական  
մրցոյթների ընթացքում շախմատի բաժնում չեմպիոն  
հանդիսացած երկտրեակներ՝ Էլենա եւ Էլիրա Բաբա-  
խանեանները: Սեր թղթակիցն առիթն յարմար նկա-  
տելով, մի մտերմիկ հարցազրոյց է ունեցել նրանց  
հետ:*

Հ.- Կը խնդրենք համառօտ ներկայացնել ձեր կենսա-  
գրականը:

Պ.- Ծնել եմք 1984 թականին Թեհրանում: Սովորել  
եմք Թեհրանի հայոց Թունեան դպրոցում (տարրական եւ  
ուղեցոյց), այժմ էլ սովորում եմք Յ.Թովմասեան միջ-  
նակարգ դպրոցում:



Հ.- Ո՞ր տարիքից սկսեցիք զբաղել շախմատով եւ  
որո՞նք են ձեր ձեռքբերումները այդ մարզում, որը նաեւ  
արդարեւ կոչում է՝ արեւատ:

Պ.- շախմատով զբաղել եմք 11 տարեկանից: 1995  
թականից սկսած մասնակցել եմք Իրանի համահայ-  
կական եւ համադպրոցական մրցութիւններին, եւ գրաւել  
եմք առաջին եւ երկրորդ տեղերը: 1997 թականին ա-  
կումբների միջեւ տեղի ունեցած մրցութիւններում գրաւել  
եմք Ա կարգի՝ խմբային բաժնում երկրորդ պատուաւոր

# Մարզական

## Շար. էջ 11-ից

տեղը, անհատական բաժնում նոյնպես արժանանալով արծաթե շքանշանի: Հարկ է յիշատակել, որ նոյն թականին Բ կարգի մրցութիւններում գրաւելով առաջին տեղը, արտօնութիւն ստացանք մասնակցելու Ա կարգի մրցութիւններին: 1998 թականին Թեհրանի բոլոր դպրոցների միջև տեղի ունեցած մրցոյթում, որ կիրառել էր տարիքի հանգամանքը (14 տարեկանից ցածր) անհատական բաժնում առաջին, եւ խմբական բաժնում երկրորդ հանդիսացանք: Նոյն թականին մասնակցելով Իրանի համադպրոցական մրցութիւններին, խմբային բաժնում առաջին հանդիսացանք: Իսկ 1999 թ. Թեհրանի նահանգի մրցութիւններում երկրորդ հանդիսացանք: Այդ թականին մեկնել ենք Հայաստան եւ մասնակցել առաջին համազգային-համահայկական մարզական մրցութիւններին: Այդ երեւոյթն ուներ բազմաթիւ յատկութիւններ: Մասնակցելով այդ մրցութիւններին առիթ ունեցանք մանաւանդ ճատրակի մարզում նոր գիտելիքներ ձեռք բերելու:



### Հ. Ի՞նչ խորհուրդ կը տալիք ձեր տարիքակիցներին:

Պ.- Կը ցանկանայինք նրանք կեանքում նպատակադրած լինեն, եւ իրենց ամէն մի պահի արժեքը բարձր գնահատեն: Այսօր մեր նոր սերունդը պէտք է ձգտի լաւագոյն յաջողութիւնների հասնելու համար:

### Հ.- Արդե՞օք մարզական պարապմունքներն ու առհասարակ մարզանքը ձեր ուսման չի խոչընդոտում:

Պ.- Ոչ, բոլորովին: Եթէ ծրագրած լինի ամէն ինչ, մէկը միւսին չի խանգարի:

### Հ.- Ի՞նչ դժարութիւններ ունէք, որո՞նք են ձեր սպասելիքները որպէս մարզիկ եւ երիտասարդ:

Պ.- Լաւ կը լինէր բոլոր առիթները եւ միջոցները քստեղծելին, որպէսզի մեր նոր սերունդը իր ցանկալի նպատակներին հասնէր: Հնարատրութիւններ պէտք են, որպէսզի մարզիկը իր ցանկացած նպատակներին հասնի:

Վերջում պատեհ առիթից օգտւելով կատարեալ յաջողութիւն ենք ցանկանում իրանահայ մամուլին՝ յանձնինս «Լոյս» երկշաբաթաթերթին: ■

**Հարցազրոյցը վարեց  
Ռոբերտ Վարդումեանը**

Պատ.- Բոլորս միասին ձեռք-ձեռքի տանք եւ ծաղկեցնենք մեր համայնքը:

**Հարց.- Այն երկրում կամ համայնքում, ուր կայ ընդդիմադիր քաղաքական կողմ, այնտեղ կեանքը դէպի զարգացում է գնում, աշխուժութիւն է առաջանում, արդե՞օք մեզ համայնքում այսպիսի ազատ դեմոկրատական մթնոլորտ կամ հանդուրժողականութիւն եղել է:**

Պատ.- Դեռ բաւարար չեն համարում: Իմ առաջարկս է, որ պատգամատրական եւ թեմական ժողովներում տարբեր խաւերից ներկայացուցիչներ լինեն: Այնտեղ ուր մրցակցութիւն եւ քննադատութիւն կայ, կեանքը ծաղկում է:

**Հարց.- Հայաստանին օգնելու նպատակով կեանքի կոչւեց Հայաստան-համահայկական հիմնադրամի գործադիր վարչութիւն, որին առընթեր կազմեցին յանձնախմբեր ըստ վիտրեան տարբեր գաղթօջախներում, նաեւ մեր մօտ Իրանում, սակայն այստեղ չաշխատեց եւ լուծարքի ենթարկեց այն:**

Խնդրում են, ասացէք, ինչո՞ւ հիմնադրամի յանձնախումբը անգործունէութեան մատնեց եւ լուծարքի ենթարկեց եւ ի՞նչ էր պատգամատրական ժողովի դիրքորոշումը այդ մասին:

Պատ.- Ժողովրդի տնտեսական վիճակը մեծ դեր ունեցաւ հիմնադրամի յանձնախմբի անգործունէութեան մէջ:

Խնդիրը բոլորովին կապ չի ունեցել պատգամատրական ժողովին, այն չի քննարկել այս հարցը եւ միջամուխ չի եղել նրա գործերում:

**Հարց.- Նախքան հարցազրոյցի աւարտը, խնդրում ենք եթէ պատգամատրական ժողովի եւ համայնքային աշխատանքների շուրջ որեւէ խօսք ունեք արտայայտէք:**

Պատ.- Պէտք է ասեմ, որ բոլորս միասնաբար պիտի ջանք տանենք մեր ազգային աշխատանքների ուղղութեամբ, կատարենք մեր պարտականութիւնները եւ սրտցաւ լինենք, որպէսզի աշխոյժ եւ ծաղկուն գաղթօջախ ունենանք:

**Հարց.- Վերջում թոյլ տուէք մեր խորին շնորհակալութիւնն յայտնել Ձեզ, որ Ձեր ժամանակը տրամադրեցիք մեզ, յուսով կարողանանք ապագայում նոյնպէս նման առիթներ ստեղծել օգտւելու համար Ձեր մտքերից:**

Պատ.- Ես էլ շնորհակալ եմ «Լոյս» երկշաբաթաթերթից, յուսով եմ, որ այս «Լոյս»-ը մի նոր լոյս բացի, մի նոր պարգոյիւն մտցնի, մի նոր ջանք եւ մի նոր նւիրածութիւն ու մի նոր միասնականութիւն առաջացնի մեր համայնքում: ■

**Թղթակիցներ՝  
Ռ. Կորիւն եւ Ռ. Սարդարեան**



## Ոսկե Օղակներ

«Լոյս» երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՄԱՍԻՆ  
ՍՊՈՐՏԻՎ ԵՎ ԿՐԹԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ  
ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

# ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 3

Կազմեց՝  
Կ. Տ. Յովհաննիսեանը

## Շորիզոնական

1. Հայ մեծանուն արձակագիր, բանասէր, թարգմանիչ (1899-1937) – ժողովրդական՝ բոլորովին:
2. Սպասատր (օտար)- արտօնած սպանութիւն- մուգ գոյն:
3. Արական անուն- գերմանացի փիլիսոփայ, գիտնական (1724- 1804)- փոխաբերական իմաստով՝ ամենայն ճշտութեամբ, առանց փոփոխութեան:
4. Չիավարութեան համար անհրաժեշտ իր- զգեստին՝ նորոգութեան համար կցւած փոքրիկ կտոր:
5. Դ-ա ունեն կենդանիները, ոչ մարդիկ- աջից՝ որոշ տեղանունների ածանց- խոշոր ձկան տեսակ, որ ապրում է ոչ խոր՝ քաղցր ջրերում:
6. Շատ ցանկալի- վիճակւած է բոլոր շնչատրներին:
7. Անուարտ գահ- ցուցական դերանուն երկու կողմից- մետաղի տեսակ, կլայէկ- դրական պատասխան:
8. Ողբալի, սգալի- արական պատմական անուն:
9. Նախկին Խ. Միութեան հանրապետութիւններից- արգիլւած (օտար):
10. Փաղաքական՝ ոտը- վերջը սղոցւած կիսաթանկագին մետաղ...- արքայական խորհրդանիշ:
11. Եկեղեցական սպասատր- գիղական աշխատավայր- անգլուխ՝ խիզախ:
12. Որդ- նաեւ՝ երաժշտութիւն, նւագ:
13. Եպիսկոպոսի կառավարման ենթակայ նահանգ, գաւառ- անիւ- մտածածին, վերացական:
14. Կոհակ- Ժան Ռիշար... Ֆրանսիացի գրող, հրապարակախօս (1884- 1947)- ցանցառ:
15. Ասում են սիրոյ օրրանն է- հաշուապահութեան մէջ՝ երկու կողմերից մէկը- անյայտ թիւ (օտար):

|    |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|----|----|----|
|    | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    | ■  |    |    |    |
| 2  |   |   |   |   |   |   | ■ |   |   |    | ■  |    | ■  |    |    |
| 3  |   |   |   | ■ |   |   |   |   | ■ |    |    |    |    |    |    |
| 4  |   |   |   |   | ■ |   |   |   |   |    |    |    |    |    |    |
| 5  |   |   |   |   |   |   | ■ |   | ■ |    |    |    |    |    | ■  |
| 6  |   | ■ |   |   |   |   |   |   |   | ■  |    |    |    | ■  |    |
| 7  |   |   | ■ |   |   | ■ |   | ■ |   |    |    |    | ■  |    |    |
| 8  |   |   |   |   |   |   |   |   | ■ |    |    |    |    | ■  |    |
| 9  |   | ■ |   | ■ |   |   |   |   |   |    | ■  |    |    |    |    |
| 10 |   |   |   |   | ■ |   | ■ |   |   |    |    | ■  |    |    |    |
| 11 |   |   |   |   |   |   |   |   |   | ■  |    |    |    | ■  |    |
| 12 | ■ |   | ■ |   |   |   |   | ■ |   |    |    |    |    |    | ■  |
| 13 |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |    |    |    |    |
| 14 |   |   |   |   |   | ■ |   |   |   |    |    | ■  |    |    |    |
| 15 |   |   |   |   | ■ |   |   |   |   |    | ■  |    |    |    | ■  |

ԼՈՒԻՔ  
ԽԱՉԲԱՆՈ  
  
ՍՏԱՅԷ  
ՍԻԵՐ

## Ուղղահայեաց

1. Հայ մատենագիր, հեղինակը «Պատմութիւն Հայոց» հնագոյն երկի- «Մեզ հերիք է քո մի ...ը» (Պ. Սեւակ):
2. Կաթնամթերքներից- սա էլ ամէն բանի համն է- այնքան էլ անտանելի չէ:
3. Ուշիմ, հնարագէտ- ժողովրդական՝ գերի- յոգնակի ստացական դերանուն:
4. Անձնական դերանուն- թէ ում համար է մորմոքում Սայաթ Նովայի լարը- թռչունի տեսակ- ժխտական ածանց:
5. Միայն- լսել ու ենթարկել- ձեռնահաս, կարող:
6. Որեւէ վայրում հաստատուած ու ապրող անձ- փաղաքական՝ տնային կենդանի:
7. Անձնական դերանուն- թերութիւն- յաւելում- գիշատիչ թռչուն:
8. Մասերի բաժանել, ընկճել- երաժշտութիւն- երգչախմբի մէջ չորս ձայներից մէկը (օտար):
9. Որտեղ, որոշ տեղանունների վերջածանց, առարկայ- արական անուն:
10. Բազմած- դառը հիօթով իրոտ խոտեղէն բոյս, բուժիչ յատկութիւններով, օշինդր:
11. Կազակական առաջնորդ- գործողութիւն:
12. Ժողովրդական ասացածքների ու իմաստալից խօսքերի մասնագէտ- աւարա, անտուն:
13. Քաջ, արի- նախ արագութիւնը եւ անցած տարածութիւնը չափող սարք- արտի մէջ բացւած հողաշերտ:
14. Ծառի դահիճը- թիակաւոր մեծ բեռնանաւ:
15. Մանելու գործիք- արւեստի ճիւղերից մէկով զբաղող կին արւեստագէտ- հողոված անձնական դերանուն:

Խաչբառ համար 2-ի  
լուծւած տարբերակը  
տե՛ս էջ 22-ում:

# Ժամանց



## ՅուՆիս

Չպէտք է մոռանա՞ք, որ հայկական ամսանունները կապւած են շարժական տոմարի հետ: Ուստի նոյնիսկ այնտեղ, ուր տրուում է դրանց ստուգաբանութիւնը, անհրաժեշտ է վերապահօրէն մօտենալ: Պարզեմ միտքս. հայկական 5-րդ ամսայ անունը, ինչպէս տեսանք, *քաղոց* էր եւ ստուգաբանօրէն նշանակում էր « գուգատրութեան ամիս»: Տեսում էր դեկտեմբերի 9-ից յունւարի 7-ը: Բայց չէ՞ որ իրականում այս շրջանը ոչ թէ գուգատրութեան, այլ ծմի շրջանն է: Ուրեմն ինչ-որ ժամանակ այս ամսանունը նոյնպէս տեղաշարժուած է եղել:

Գրաբարում գրել է նախնական շրջանում կարդացել է իլիս: Կապում է հռոմէացի խոշորագոյն քաղաքագետ, զօրավար, հռետոր, գրող եւ պատմաբան Յուլիոս Կեսարի (մ.թ.ա. 100 կամ 102-44) անուն հետ, որ լատիներէն ամբողջական հորջորջումներով այսպէս է հնչում՝ Caius Julius Caesar : Եղել է Հռոմէական Կայսրութեան ղեկատարը մ.թ.ա. 49-44-ին, յատկապէս հռչակել է Գալլիայի նաճումով, որի մասին գիրք է գրել: Յուլիսը նրա ծնւած ամիսն է:

## Ասացւածքներ

- Գայլը գայլ է, թեկուզ ոչխարը չի կերել:
- Քամի եւ ցանել, Փոթորիկ սպասիր:
- Ով կարդայ, նա մարդա:
- Համբերութիւնը կեանք է:

## Առած

- ◆ Գեղ կանգնի գերան կկոտրի:
- ◆ Ասեմ բոց կըլնի, չասեմ խոց կըլնի:
- ◆ Ունքը շինելու տեղ, աջքն էլ հանեց:

## Փաստեր

Աշխարհի ամենաթանկ հիւրանոցը «Նովափարկ» հիւրանոցն է, Փարիզում:

Մէկ օրայ արժեքը մի սենեակի համար 3525 փոնդ է, որը գերազանցում է մեծ մասամբ Ֆրանսիացիների մէկ տարւայ աշխատատարձից:




## Հումոր

- ⇒ Մի վանեցի գնում է պաղպաղակ գնելու:
- Փայտէ պոչով պաղպաղակ ունե՞ք:
  - Ոչ, չունեն, բայց ուրիշ աւելի լաւը կայ,ինչու՞ ան-պայման փայտէ պոչով:


- Որովհետև փայտէ պոչովը համ ուտելիք է, համ վառելիք:

- ⇒ - Տղայ ջան, անունդ ինչա՞:
- Ես:
  - Ընչի՞ Էտե՞նց անուն էլ կայ՞:
  - Բա որ այսպորս անունն էլ իմանաս՝ Առաւելես:

- ⇒ Մայրը սպառնում է իր փոքր տղային.
- Եթէ դու չուտես այդ շիլան, իսկոյն կը կանչեմ չար կախարդին:
  - Մայրիկ, իսկ դու վատա՞հ ես, որ չար կախարդը կարող է ուտել այս անհամ շիլան:



Չի կարելի՛, մատդ բերանդ չդնե՛ս:



Հանգիստ եղիր, հայրիկ ես արդէն գիտեմ:



## Հանելուկ

Մութն ընկնելիս  
Քուն է մտնում,  
Առաւօտ շուտ  
Տուն է մտնում:

«Լս՛ Վիտեզվը»

## Փոր

Մարմնի երկրաչափական կենտրոնը կոչւում է փոր:

Երբեմն փորը դառնում է մտաւոր կենտրոն և ղեկաւարում ուղեղի աշխատանքը:

Փորի տարողութիւնը փոփոխական է. հեղուկների գծով՝ մի բաժակ ջրից մինչև մի տակառ զարեջուր, կոշտ ուտելիքների գծով՝ մի կտոր հացից մինչև մի հիմնարկ-ձեռնարկութիւն:



|    |    |    |   |    |   |    |   |   |    |    |    |    |    |    |
|----|----|----|---|----|---|----|---|---|----|----|----|----|----|----|
| 1  | 2  | 3  | 4 | 5  | 6 | 7  | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1  | մ  | ե  | լ | ի  | ք | թ  | ա | ն | զ  | ե  | ա  | ն  | ւ  | ա  |
| 2  | ե  | ս  | ա | պ  | ա | շ  | տ | ն | ա  | ր  | ն  | ա  | թ  | ո  |
| 3  | տ  | ի  | կ | ծ  | ն | օ  | տ | ն | ա  | կ  | ն  | ա  | ր  | կ  |
| 4  | ա  | ր  | ա | բ  | ա | մ  | ֆ | ա | կ  | ա  | կ  | տ  |    |    |
| 5  | դ  | մ  | ե | ղ  | մ | ս  | ս | ս | ր  | ա  | ք  |    |    |    |
| 6  | ա  | ղ  | ա | մ  | ի | ր  | ա | պ | է  | ս  | ր  | ի  | օ  |    |
| 7  | ձ  | ի  | ն | ա  | ա | թ  | ո | ր | ո  | ր  | ո  | ր  | ո  |    |
| 8  | ու | ժ  | ա | ն  | ա | պ  | ա | տ | ր  | ա  | վ  | ա  |    |    |
| 9  | լ  | ի  | ճ | ծ  | լ | է  | ն | ֆ | ի  | ֆ  | ա  | ր  |    |    |
| 10 | ա  | ն  | օ | թ  | ի | ա  | ի | ա | ի  | ա  | ֆ  | ր  | ա  | կ  |
| 11 | ր  | ճ  | ա | ր  | ա | ն  | ն | ւ | մ  | շ  | ի  | ն  | ծ  | ու |
| 12 | ա  | պ  | ա | ր  | պ | ա  | ս | ի | է  | կ  | կ  | ա  | մ  |    |
| 13 | ն  | ա  | զ | ա  | ն | ի  | ր | ա | զ  | ե  | կ  | կ  |    |    |
| 14 | կ  | ա  | ն | ու | կ | ու | մ | թ | ա  | ր  | ա  | ղ  |    |    |
| 15 | ր  | ու | կ | թ  | ի | ա  | ր | ա | ն  | տ  | ն  | ա  |    |    |

Համար 2  
խաչբառի լուծած  
տարբերակը

# Երիտասարդի համար

## Տատիկի ակնոցը և լուսնի խառնարանները



Պրոֆ. Ռ. Ա. Ղազարեան

Մուշեղը հաստ բոթից մի երկար խողովակ էր սարքել, մի հաստ էլ կարճ: Խողովակների մէջ էլ կլոր ապակիներ ամրացրել: Ուրեմն նորից գիտական փորձանք, ոչ... գիտական փորձեր է անելու. դա տատիկն է ասում, որ փորձեր չեն, այլ՝ փորձանք: Մուշեղը միշտ փորձեր է անում, իսկ ես օգնում եմ նրան, որովհետև նա եօթերորդ դասարանում է, իսկ ես՝ արդէն հինգ տարեկան եմ:

- Ի՞նչ ես սարքում, Մուշ:
  - Հեռադիտակ:
  - Հեռադիտակ... Ընդ... սովորական ակնոցից:
  - Շատ դժար է սովորական ակնոցից, չէ՞, Մուշ:
  - Այնքան էլ չէ՛ շուտով պատրաստ կլինի:
- Ես ուզեցի հարցնել թե՛ ի՞նչ բան է հեռադիտակը, երբ տատը դուրս եկաւ քակ:
- Մո՛ւշիկ, Վազգէնի՛կ, ակնոցս ձեր աչքով չի՞ ընկել:
  - Մուշեղը արագ նայեց ինձ, յետոյ հանգիստ ասաց.
  - Չէ՛, տատ, չենք տեսել:

Տատը մտաւ տուն, տրտնջալով իր յիշողութիւնից: Ահա թէ ինչու էր Մուշիկը խնդրել ինձ տատիկի ակնոցը աննկատ բերել իրեն:

-Բը՛ն-նը-ւե՛-ցիք, բը՛ն-նը-ւե՛-ցիք... ուրիշներին ասում ես տատ չխօսեն, իսկ ի՞նքը...

-Նայած ինչ նպատակով,-- չոր-չոր ընդհատեց Մուշեղը.- ես գիտութեան համար եմ անում՝ դա յանցանք չէ, իսկ դու մի գոյալ մուրաբայի համար պատրաստ ես օրերով ստել:

Իհա՛րկէ, նա երբէք մեղաւոր չէ... ես ուզեցի մի լաւ պատասխան տալ Մուշեղին, բայց խօսք չգտայ... եւ յետոյ ինձ փորձն էր հետաքրքրում:

- Ինչո՞ւ ես սարքում եմ հեռադիտակը, Մուշ:
- Լուսնի խառնարաններն են դիտելու:
- Խառնարանն ի՞նչ է:
- Հրաբխի բերանն է:
- Ա՛-ա՛-ա... քա ինչո՞ւ տատը իր ակնոցով չի տեսնում լուսնի խառնարանները:

Մուշեղը չգիտես ինչու գայրացաւ.

-Ակնոցն ու հեռադիտակը տարբեր բաներ են, հանգիստ բող ինձ... քո խելքի բանը չէ:

-Ա՛յ, ես դրանից եմ պայթում...

-Տատիկի ակնոցը քո յիմար փորձի համար գողանալը իմ խելքի բանն է, իսկ հեռադիտակը ո՞չ... Գե՛նդ գլուխդ մի՛ գցիր,- Մուշեղը վախեցած նայեց տան կողմը.- ես մեղաւոր եմ, որ դեռ փոքր ես, շատ բան չես հասկանում... օրինակ, որ երկրագունդը կլոր է ու պտտւում է:

-Ճիշտ չե՛ս ասում, հասկանում եմ, բայց չեմ հասկանում, թէ ոնց են մեր տակը ապրող մարդիկ ման գալիս ու չեն ընկնում:

-Դէ՛, տեսնո՞ւմ ես, որ չես հասկանում: Հազար անգամ եմ ասել, որ բոլորի համար «տակը» երկրագնդի կենտրոնն է, որովհետև նա ձգում է բոլորիս:

-Էլի արո՞ճետարութիւն ես անո՞ւմ,- լսեց Բորիսի ձայնը, ու ցանկապատի վրայ յայտնեց նրա շէկ գլուխը: Մուշեղը դժգոհ նայեց ու լուռ մնաց:

-Մուշեղը հեռադիտակ է սարքում,- ասացի ես,- սովորական ակնոցից:

Չասացի, որ տատիկի ակնոցից:

-Բորիկ, իսկ դու գիտե՞ս, որ երկիրը կլոր է ու պտտւում է,- հարցրի ես:

-Ես գիտեմ, որ քո գլուխն է կլոր, պարզ տեսնում եմ:

-Իսկ քոնը դատարկ է,- ասացի ես:

Բորիսը ծիծաղեց, իսկ ես բարկացայ: Այդպիսին է այդ պեպեցնողը՝ բոլորին ջղայնացնում է, յետոյ իրենից գոհ՝ ծիծաղում:

Երբ մութն ընկաւ, Մուշեղը հեռադիտակը յենեց ցանկապատին և ուղղեց լուսնի վրայ: Նա ետ ու առաջ տուեց ներսի խողովակն ու յանկարծ բղաւեց՝

-Ահա՛, ահա՛, երևացին...

-Ովքե՞ր երևացին, Մուշ, տուր ես էլ նայեմ: Մուշ...

-Մայասիր,- ասաց Մուշեղը ու շարկեց հեռադիտակից: Եւ, հենց այդ պահին մէկը, ցանկապատի միւս կողմից, վեր ցատկեց ու բռնեց հեռադիտակը: Հեռադիտակը ծալեց մէջտեղից ու կախեց ցանկապատի վրայ:

-Տղեք, փայտից չէր, կտորեց,- լսեց Բորիսի վախեցած ձայնը ու նրանք փախան:

Մուշեղը սկզբում ոչինչ չհասկացաւ, իսկ երբ տեսաւ ծալած խողովակը, թաւ ցանկապատից այն կողմ, բայց Բորիսն արդէն ծլկել էր: Ես իջեցրի հեռադիտակը ու փորձեցի ուղղել: Նա համարեա նախկին տեսքն ընդունեց: Յետոյ ես այն յենեցի ցանկապատին ու նայեցի խողովակի մէջ, բայց ոչինչ չտեսայ: Մուշեղը վերադարձաւ շատ բարկացած:

-Մուշիկ, ես համարեա սարքեցի, բայց ոչինչ չի երեւում:

Ես վախեցնում էի, որ ինձ կվճռի՝ բարկացած էր, բայց նա ասաց.

-Պէտք է կարգի գցել: Դու նայիր՝ ես կկարգաւորեմ:

Ու ես տեսայ լուսնի խառնարանները: Նրանք կլոր էին և այնքա՛ն շատ: Յետոյ մենք նայում էինք հեռադիտակի շէնքերին, նրանք մօտիկ էին երևում: Շատ հետաքրքիր էր: Մայրիկը կանչեց քնելու: Ոչ մի աղաչանք չի օգնում: Ես պառկեցի ու սկսեցի մտածել, թէ ինչո՞ւ մեր «տակը» ապրող մարդիկ չեն ընկնում, բայց ոչ մի կերպ չէի հասկանում: Յետոյ քնեցի ու երագում տեսայ ինձ երկրագնդի միւս կողմում: Բոլորը քայլում էին գլխիվայր՝ ինչպէս գետափին ջրի մէջ է երևում: Յանկարծ մի երեխայ արկեց ու սկսեց ընկնել: Ես վախեցայ ու գռռացի, որ նա ետ դառնայ, որովհետև «տակը» երկրագնդի կենտրոնն է: Նա է մեզ ձգում... ու արթնացայ: Նորից սկսեցի մտածել և, յանկարծ հասկացայ, թէ ինչպէ՞ս պէտք է գգալ երկրի պտոյտը: Շատ հեշտ է, ո՞նց գլխի չեմ ընկել: Եթէ երկիրը պտտւում է, ուրեմն գիշերը Բորիսեցն բակը կը գալ մեր բակի տեղը, իսկ մերը՝ Բորիսեցն բակի տեղը: Ես վեր թռայ մահճակալից և վազեցի պատուհանի մօտ... Բորիսեցն բակը իր տեղում էր...

Շատ տխրեցի, ուրեմն իրոք ինչ-որ բան չեմ հասկանում:

Պատկեցի տեղս: Լուսինը նայում էր պատուհանից ներս: Որոշեցի ստուգել՝ կը տեսնե՞մ արդեօք խառնարանները ակնոցով: Դրեցի պայիկի ակնոցը: Աւելի վատացաւ ամեն ինչ արտոտացաւ ու աչքերս ցաւեցին: Հանեցի և որոշեցի առանց ակնոցի նայել. եթէ երկար նայեմ ու չբարթեմ, գուցէ տեսնեմ: Շատ երկար նայեցի: Լուսնի վրայով թեթեւ ամպ անցաւ: Յանկարծ լուսինը ժպտաց, նմանեց Բորիսի պեպեցնող դէմքին ու սկսեց ծամաձուլութիւններ անել: Արթնացայ: Արևի շողքը ընկել էր դէմքիս: ■